

Ավետիք Իսահակյան (Հուշեր)

«Ես երջանիկ եմ, որ հաջողվեց ինձ անձամբ ճանաչել մեր դարի մեծագույն պոետին՝
Իսահակյանին»
Ի. Էրենբուրգ

17 տարի է անցել Ավետիք Իսահակյանի մահվան օրից, եթե միայն նա մահ ունի, բայց այսօրվա պես հիշում եմ Վարպետին: Ահա նա անցնում է փողոցով «Երազային իր տարտամ քայլերով» շորորալով, գլուխը փոքր-ինչ հակած, ինչպես հատվիցքի ժամանակ ցորենի հասկն է լինում իր ծանրության տակ կքած: Վերջին մի քանի տարիներին ավելի էր նկատվում այդ հակվածությունը: Կարծես նա աչք էր գցել անկուշտ հողին:

Իսահակյանի անունը ինձ հայտնի էր դեռ մանկուց, երբ հայրս իր առիթնող ձայնով երգում էր նրա «Մայրիկիս» երգ-բանաստեղծությունը: Հետո իմ գիտեցածին ավելացան պոետի և այլ բանաստեղծությունները, երբ եղբայրս տանը բարձրաձայն կարդում էր (անգիր անելու նպատակով) Իսահակյանի «Գիշերն եկավ գով-հովն ընկավ»-ը և «Սև-մութ ամպեր ճակտիդ դիզվանը»-ը: Այդ օրերից անցան բավական տարիներ:

Առաջին անգամ Իսահակյանին տեսա 1936 թվականին, երբ ես Երևանի համալսարանի լեզվագրական ֆակուլտետի վերջին կուրսի ուսանող էի: Նույն թվականի դեկտեմբերի հինգին էր, որ Վարպետը ընդմիջտ վերադարձել էր արտասահմանից և ժամանակավորապես տեղավորվել ու ապրում էր «Բնտորիստ» հյուրանոցում: Մենք որ այդ օրը ամբողջ համալսարանով գնում էինք այժմյան Լենինի հրապարակը տոնական շքերթին մասնակցելու, երբ հասանք հյուրանոցի մոտ, ուսանողությունը տարերային ձևով մղվեց հյուրանոցի կողքի հրապարակը, Աբովյանի արձանի մոտ: Վարպետը, տեսնելով մեզ, դուրս եկավ պատշգամբ և հուզված ձայնով մի քանի խոսք ասաց:

Ժամանակ անց որոշեցի անձամբ ի մոտո ծանոթանալ Վարպետին: Մանավանդ որ առիթ էլ կար: Ես այն ժամանակ զբաղվում էի Տերյանի կրած գրական ազդեցությունների խնդրով, և քանի որ Տերյանը ուսումնառվել և ազդվել էր Իսահակյանից, ուզեցի հարստացնել իմ ձեռքի տակ եղած փաստերը: Երբ այդ մասին հայտնեցի իմ համալսարանական ընկերներից մեկին, սա ևս ուզեց հետս գալ. ես չմերժեցի, և միասին ուղղվեցինք դեպի հյուրանոց: Ճանապարհին մտածում էի՝ ինչի՞ց սկսել, ի՞նչ ասել, ինչպե՞ս ասել, որպեսզի Վարպետը չկարծի, թե ասածներս սոսկ պատրվակ էին, իսկ բուն նպատակս՝ ծանոթանալը: Բարձրացանք հյուրանոցի երկրորդ հարկը, թեքվեցինք դեպի աջ, մոտեցանք վերջին սենյակի դռանը և կանգ առանք: Վեհերոտ և անհամարձակ բախեցի դուռը: Ներսից լսվեց Վարպետի ձայնը.

- Ո՞վ է:

Նրա հարցումը մնաց անպատասխան: Չգիտեի ինչ ասելի: Ասեի, թե ես եմ, բայց չէ՞ որ նա կարող էր հարցնել՝ իսկ ո՞վ ես դու. ի՞նչ պատասխան տայի ես այդ հարցին. որոշեցի պապանձվել:

Իսահակյանը ջղայնացած ասաց.
- Չայն հանիր, ո՞վ ես, - և, չսպասելով պատասխանի, դուռը բացեց: Երեսը օճառված էր. պատրաստվում էր սափրվելու:

- Երբ հարցնում են, թե ո՞վ ես, պետք է պատասխանել,- հանդիմանեց Վարպետը և ավելացրեց,- մի կես ժամից եկեք, արդեն սափրված կլինեմ: Կշտամբանքի այդ խոսքերը ականջիս՝ հեռացա ընկերոջս հետ:

«Գնալ, թե՛ չգնալ», - մտածում էի ես, մոտ կես ժամ չկարողանալով որոշել այդ հարցը, ի վերջո

վճռեցի՝ ինչ ուզում է լինի, գնալ:

Հենց որ բարձրացանք հյուրանոցի երկրորդ հարկը, միջանցքում հանդիպեցինք Իսահակյանին՝ Նվարդ Թումանյանի հետ խոսելիս, որը նոր էր դուրս եկել Վարպետի մոտից և գնալու վրա էր: Միջանցքի մի անկյունում շունչներս պահած աշխատեցինք աննկատ մնալ այնքան ժամանակ, մինչ որ Վարպետը խոսքը վերջացներ: Մտածում էի՝ ինչու՞ Նվարդը կարճ չի կտրում ասելիքը: Նա էլ մեզ տեսնելով կարծես դժկամություն արտահայտեց դեմքին. «Հյուրը հյուրին չի սիրում, իսկ տանտերը՝ երկուսին էլ»: մտածեցի ես: Վերջացնելով իր խոսքը Նվարդի հետ, Վարպետը, որ նախօրոք նկատել էր մեզ, քայլերը ուղղեց մեր ուղղությամբ: Ես էլ ինքնաբերաբար եկա ընդառաջ: Ինչ իմանայի, որ մի նոր հանդիմանություն ևս պիտի ճաշակեի:

- Ինչու՞ ուշացար, չե՞ որ քեզ ասի՝ կես ժամից արի, ստիպեցիր ինձ սպասել: Գնանք, տեսնեմ ինչի եք եկել:

- Կորկոտ ունիմ աղալու,- պատասխանեցի ես և նկատեցի, որ դա դուր եկավ Վարպետին:

- Որտեղացի՞ ես,- հարցրեց Իսահակյանը:

- Ախալցխացի,- պատասխանեցի ես:

- Հայրենակից ենք,- ասաց Վարպետը և, բաց անելով դուռը, ընդառաջեց մեզ իր բնակարանը: Այստեղ գտանք Վարպետի տիկնոջը՝ տիկին Սոֆիին: Տիկինը սիրալիր ընդունեց մեզ և կիրթ շարժումներով ընդառաջ եկավ:

- Տղաների համար սուրճ պատրաստիր,- դիմեց Վարպետը տիկին Սոֆիին: Տեղավորվելով կյոք սեղանի շուրջը՝ Վարպետը ձեռները հենարան դարձրեց կզակի համար. ես իսկույն հիշեցի Մարտիրոս Սարյանի նկարը:

- Ի՞նչ գործով եք եկել,- նորից հարցրեց նա:

- Եկել եմ Ձեզանից մի քանի տեղեկություններ քաղելու Վահան Տերյանի մասին, ես նրա կրած գրական ազդեցությունների հարցով եմ զբաղվում:

- Վահանը ինձանից իրոք ազդվել է. նա ինձ ասում էր, որ ոչ միայն ինքը, այլև կինը, որին թարգմանաբար Վահանը ծանոթացնում էր իմ ոտանավորներին, սկսել էր սիրել իմ երգերը, հետո Վահանը կատակով ավելացրեց, որ՝ եթե կինս բացի ոտանավորներդ սկսի սիրել և քեզ՝ ես մեղավոր չեմ: Այդ խոսքերի ժամանակ տիկին Սոֆին ամբողջովին լսողություն դարձած ժպտաց և մի երկու խոսք ասաց, բայց այժմ չեմ հիշում, թե ինչ: Որոշ տեղեկություններ հաղորդելուց հետո ինձ հետաքրքրող հարցի վերաբերյալ, Վարպետը սկսեց հարցուփորձ անել մեր ով լինելու մասին: Մի քանի բան հիշեց մեր քաղաքից, ուր մի երկու անգամ եղել էր նա անցյալում իր կատարած շրջագայությունների ժամանակ: Վարպետը առանց ձանձրանալու զրուցում էր հետս: Նկատելով այդ, ես էլ ազատ զգացի, բայց չափի զգացումը թելադրեց ինձ շուտ վեր կենալ: Ընկերս, որ մեր խոսակցության ամբողջ ընթացքում մի բառ անգամ չէր փոխանակել, նույնպես վեր կացավ, և մենք հրաժեշտ տվինք Իսահակյանին: Երբ դուրս էինք գալիս սենյակից, Իսահակյանը կամացուկ հարցրեց ինձ.

- Ընկերդ հո համր չի՞:

- Ոչ, ուրբաթախոս է, -պատասխանեցի ես: Վարպետը ուրախ-ուրախ ժպտալով ճանապարհեց մեզ և ասաց, որ մեկ-մեկ այցելենք իրեն:

Մեր առաջին հանդիպումից մեկ-երկու տարի անց, ես Գրողների տանը մի դասախոսություն կարդացի Վահան Տերյանի մասին: Վարպետն էլ էր ներկա: Զեկուցումից հետո մոտեցավ, սեղմեց ձեռքս, ասելով.

- Հավանեցի զեկուցումդ, բովանդակալից էր և լավ լեզվով:

1937 թվականից սկսեցի զբաղվել Իսահակյանի ստեղծագործությունների ուսումնասիրությամբ: 1939 թվականին մի աշխատանք տպագրեցի «Խորհրդային գրականություն» հանդեսում՝ «Իսահակյանի լիրիկան» խորագրով, որ հետո լույս տեսավ

նան առանձին գրքով: Այդ օրերին Իսահակյանը մեկնել էր Մոսկվա՝ հայկական արվեստի ու գրականության տասնօրյակին մասնակցելու: Երբ լույս տեսավ հանդեսի հիշյալ համարը, մի օրինակ ուղարկեցի Մոսկվա՝ Վարպետին: Չանցած մի քանի օր, մի բացիկ ստացա նրանից հետևյալ բովանդակությամբ.

«Միրելի Օննիկ, շնորհակալությամբ ստացա ուղարկածդ «Խ. գրականություն»-ը և ժամանակ գտա այս ջրապտույտի մեջ կարդալու հոդվածդ: Ամենից առաջ ասեմ, որ թուղթ չունենալու պատճառով բաց նամակի վրա եմ գրում: Գրել ես շատ սրտանց, ջերմությամբ, սիրով ու դրա համար հատկապես շնորհակալություններս: Քննադատը պիտի սիրի հեղինակին, որ հասկանա նրան. երբ սիրես՝ կհասկանաս, երբ հասկանաս՝ կսիրես: Հետո երևում է, որ իմ մասին նախկին գրածները բոլորը կարդացել ես, նաև իմ գրեթե բոլոր գործերը: Շատ լավ ուսումնասիրություն է, լրիվ է ու լուրջ. միայն մի երկու կետի մասին խոսք ունիմ ասելու, այն էլ Երևանում կասեմ: Առայժմ ջերմ բարևներ քեզ, Արամին և Հակոբին:

Ձեր Ավետիք Իսահակյան»:

Ուսումնասիրություններս Ավ. Իսահակյանի գրական ժառանգության շուրջը հիշյալ աշխատանքով չվերջացան. ավելի ճիշտ այդ գործով ծայր առան. այնուհետև ինչքան շատ սկսեցի հասկանալ Վարպետին, իրոք որ այնքան ավելի սիրեցի նրա անմահ պոեզիան: Իսկ երբ ձեռնամուխ եղա Իսահակյանի ստեղծագործական կյանքի պատմության շարադրանքին, կարիք զգացվեց ավելի հաճախակի հանդիպումներ ունենալու պոետի հետ: Այն ժամանակ Վարպետն ապրում էր Ղուկասյանի փողոցի վրա գտնվող թիվ 12 տանը:

Այցելություններիս ժամանակ Վարպետին հաճախ գտնում էի զանազան մեծ ու փոքր գրքերով ծանրաբեռ գրասեղանի առաջ նստած, կարդալիս կամ գրելիս:

Գրասեղանի վրա դրված էր արծաթե թղթով պատած մի ահագին պայտ: Գրասեղանի դիմացի պատին կախված էր պոետի մոր՝ Ալմաստ խանումի նկարը:

-Վարպետ, ըստ երևույթին Դուք շատ եք կապված եղել Ձեր մոր հետ:

-Այո, սիրելի Օննիկ. մայրս անմահ կին էր: Ուր էլ գնացել եմ, նրա պատկերը միշտ հոգուս մեջ է եղել... ծովի չափ սեր ուներ պահած ամենքի համար. խղճմտանքի մարմնացում էր Աբլաս: Ղազարապատցիք Աբլայիս՝ Ալմաստ խանումի անունով էին երդվում, պաշտամունք ունեին նրա հանդեպ: Մայրը ամենանվիրական էակն է: Արժե աշխարհ գալ, միայն մայր ունենալու համար: Մոր աչքերից առավել հմայիչ ու գեղեցիկ ոչինչ չկա աշխարհում:

Մոր պաշտամունք ունեցող Իսահակյանը խստապահանջ և անզիջող էր բոլոր նրանց նկատմամբ, ովքեր պատասխանատվությամբ և երկյուղածությամբ չէին մոտենում այդ թեման շոշափող իրենց ստեղծագործություններին: Մի անգամ իմ մոտիկ բարեկամ բանաստեղծ-թարգմանիչ, գրականագետ Արշավիրի հետ ինչ-որ գործերով գնացել էինք Պետերատ: Գեղարվեստական բաժնի վարիչի սենյակում հանդիպեցինք Իսահակյանին: Արշավիրը մի պոետ էր գրել իգդիրցիների գաղթը պատկերող թեմայով և շատ էր ուզում իմանալ Իսահակյանի կարծիքը: Ինձ էլ խնդրել էր այդ հարցով դիմել Վարպետին: Հարմար առիթը ներկայացել էր արդեն, ես մոտեցա Արշավիրին և ցածր ձայնով ասի.

-Ուզու՞մ եք հենց հիմա խնդրենք Վարպետին, Դուք կարդացեք, նա էլ կլսի:

Առաջարկիս վրա Արշավիրը թեթև կարմրեց, Վարպետը, որը աչքի տակով նայում էր մեր կողմը, դիմելով ինձ, հարցրեց.

-Ի՞նչ կա ատամիդ տակը;

- Արշավիրի պոետը,- պատասխանեցի ես կատակով և ավելացրի՝ ուզում ենք Ձեր

լուսավոր կարծիքը իմանալ:

-Դու երևի արդեն առել ես ատամիդ տակ:

-Չէ, Վարպետ, Ձեր ատամի տակ ենք ուզում գցել:

-Միտով,- պատասխանեց Իսահակյանը և, մոտ քաշելով աթոռը, ասաց,- դանդաղ կարդացեք:

Արշավիրը, վեհերոտ պատանու պես, դողդողալով ծոցի գրպանից հանեց պոեմը և սկսեց տրամաբանական շեշտով և լավ առոգանությամբ կարդալ: Պոեմը անմիջապես սկսվում էր գաղթի նկարագրությամբ: Գաղթի ճամփան բռնած պառավ Ազու բերանով պատմվում էր սրից, հրից ու ջրից հրաշքով ազատված այդ դժբախտների տառապանքների մասին: Վարարած գետը անցած և հանգիստ առած գաղթականների խումբը Ազուն շրջապատած մի փոքր շունչ են քաշում: Այսօրվա պես լավ հիշում են պոեմի չարաբաստիկ այս տողերը.

Այստեղ Ազին դադար առավ,

Հանց վերելքի հասած մի եզ,

Աչքերն աղի արցունք կալան ...

Դեռ նոր էր այս տողերի հնչունները օդում մարել, երբ Իսահակյանը շանթահարվածի պես տեղից վեր ելավ, դեմքը կնճռոտեց և սկսեց հանդիմանական խոսքերի տարափ տեղալ, առանց այն էլ ամոթխած բարեկամիս վրա:

- Այ Արշավիր, այդ ի՞նչ ես գրել, չես ամաչու՞մ, մարդ էլ մորը, խեղճ Ազուն եզի հետ կհամեմատի՞:

Բարեկամն կարկամած փորձեց մի երկու բացատրություն տալ արդարանալու նպատակով, դրա վրա Վարպետը ավելի վրդովվեց:

- Ի՞նչ է, մեջքիդ չես ուզում գալ,- և մի քանի ծանոթ խոսքեր էլ ասեց, որ մի փութ մեղրով չէր ուտվի: Մենք թողինք Վարպետին ու գնացինք ավելի չզրգռելու համար նրան: Զգայուն բարեկամն շատ ազդված էր, և ես նրան ուղեկցեցի մինչև տուն: Ճանապարհին, իհարկե, բացատրեցի մոր պաշտամունք ունեցող Իսահակյանի հուզմունքի և գայրույթի պատճառը: Մայրը սրբության սրբոց է Իսահակյանի համար: Անգամ «Աբու Լա-լա Մահարի» պոեմում ժամանակավոր տրամադրություններից բխած այդ երկում հեղինակը, որ խստագույնս նգովում, անիծում էր և ընկերոջը, և մարդուն, և կնոջը, և անգամ հորը, ունեցավ մի սրբություն, որի դեմ ձեռք չբարձրացրեց, դա մայրն էր, բարի արևի պես ջերմացնող էակը.

«Մայրական դու գիրկ, դու միայն բարի, դու միայն սուրբ-սուրբ,

Դու գերահրաշ, միակ գեղեցիկ», - ասում է պոետը:

Այսքան նվիրական գաղափար է Իսահակյանի համար մայր հասկացությունը և գուր չէ, որ մեր գրականության մեջ, և ոչ միայն մեր գրականության, մորը նվիրած Իսահակյանի բանաստեղծությունները իրենց հուզականությամբ և այնտեղ արտահայտած ակտրոիզմի, հումանիզմի վեհ պատգամներով մնում են անգերազանցելի: Ահա թե ինչու այդպես վիրավորվեց Իսահակյանը Ազուն եզի հետ համեմատող հեղինակից:

-Ընկեր Արշավիր,- հանգստացնում էի ես բարեկամիս,- ախր Վարպետը ոչ թե պոեմի մասին բացասաբար արտահայտվեց, որ դեռ չէր էլ հասցրել լսել մինչև վերջը, այլ Ազուն եզան հետ համեմատելու պատճառով միայն ամբաստանեց Ձեզ:

-Այլևս ինձ ոչինչ չի հետաքրքրում, զամբյուղը կնետեմ, կոչնչացնեմ պոեմը:

- Չէ, այդ չէք անի, զամբյուղը նետեք միայն այդ համեմատությունը:

Անցավ բավական ժամանակ այդ դեպքից, մի օր էլ Արշավիրը տարավ ինձ իրենց տուն և կարդաց պոեմի մի ուրիշ տարբերակը: Պոեմը վատ չէր դուրս եկել, կոլորիտով գրված մի

դրամատիկ գործ էր ստացվել: Առանց Արշավիրին հայտնելու մտադրությունս մի առիթով Իսահակյանի հետ գրուցելու ժամանակ խնդրեցի նրան մեկ անգամ էլ կարդալ բարեկամիս պոեմի վերամշակած այլընթեռնումը: Վարպետը անդրդվելի մնաց, կտրուկ ձևով հրաժարվեց կատարել խնդիրքս:

Իսահակյանի հետ ունեցած իմ հաճախակի հանդիպումների հիմնական նպատակն էր խոսքի ու գրույցի միջոցով նյութեր քաղել բանաստեղծի կյանքից, ինչպես և նրա ստեղծագործությունների գրության շարժառիթների մասին: Բայց Վարպետը մեծ մասամբ խոսակցությունը տանում էր այլ ուղղությամբ, խոսում էր գրական նորությունների մասին, այս ու այն մարդու մասին, և երբ հիշեցնում էի նրան, որ անդրադառնա իր ստեղծագործություններին, օձիքն ազատելու համար տեղի էր տալիս: Նկատում էի, որ երբ մատիտս ձեռքս էի առնում՝ ասածները գրի առնելու, սրտնեղվում էր: Չգալով այդ՝ դադարեցի իր ներկայությամբ գրելը: Նյութից ոչ հեռու հարցերով «առաջ էի քաշում» Վարպետին, այդ ժամանակ նա անբնագրու և հաճույքով պատասխանում էր հարցերիս, հետո տուն գալով գրի էի առնում ասածները: Երբ մի անգամ էլ գնացի Վարպետի մոտ լրացնելու գրառումներս, տեսա, որ զբաղված էր Թումանյան կարդալով: Մոտ կանչելով ինձ, նա ասաց.

-Տես, ոնց է գրել Հովհաննեսը, կարծես խոսում է, կենդանի գրուցում է հետո, գրքայնության հետք չկա գրածների մեջ: Ապա խոսք բացեց Թումանյանի հաշտարարական ունակությունների մասին:

-Մի անգամ «Գուտենբերգ» գրավաճառատանը սաստիկ վիճեցի Լեոյի հետ: Գարեգին Լևոնյանն էլ մոտս կանգնած էր: Հաջորդ օրը, Թումանյանը, որ նախապատրաստում էր Լեոյի հորեյանը կատարելու, իմանալով մեր կովի մասին՝ չուզեց, որ հասարակության մեջ տարածվի այդ լուրը և այնպես արեց (ես էլ չգիտեմ, թե ինչպես), որ ստիպեց ինձ Լեոյի հետ, պատկերացնում էս, այն էլ կովի հաջորդ օրը, դուրս գալ գրոսնելու Գալավինյան հրապարակում: Աջ թևը տալով ինձ, ձախն էլ Լեոյին, Հովհաննեսը մի քանի անգամ ման ածեց փողոցի երկայնքով, որպեսզի հասարակությունը տեսնի, թե բան չի պատահել: Գարեգին Լևոնյանը, որ հակառակի նման անցնում էր այդ ժամանակ փողոցով, տեսավ ինձ Լեոյի հետ, վերհիշեց երեկվա կովի դեպքը, որին ականատես էր ինքը, և զարմացած ժպտաց:

Վարպետը շատ սիրով էր խոսում նաև իր ուսուցչի՝ մեղմ, բարի բնավորության տեր Հովհաննիսյանի և իր վաղամեռ աշակերտի՝ Վահան Տերյանի մասին: Հուշերի այս մասը հայտնի է շատերին Վարպետի գրածներից, ուստի ես այժմ կնշեմ Իսահակյանի՝ Չարենցի մասին պատմածները, որը ոչ մի տեղ չի գրված և չի տպված:

Իմ հերթական այցելություններից մեկի ժամանակ, երբ լավ տրամադրության մեջ էր Իսահակյանը, օգտվելով առիթից, խոսք բացեցի Չարենցի մասին և ապա արտասանեցի նրա «Ես իմ անուշ Հայաստանի»-ն: Երբ լռեցի, Վարպետը, դիմելով ինձ, ասաց.

-Գիտե՞ս, որ դա Եղիշեն գրել է պատանի հասակում. զարմանալի բանաստեղծություն է, ուղղակի եզակի:

-Վարպետ,- դիմելով Իսահակյանին, ասացի ես,- ե՞րբ էք առաջին անգամ հանդիպել Չարենցին: Վարպետը ժպտաց և ասաց.

-Չարենցին ծանոթացա, երբ նա 1925 թվականին իր արտասահմանյան ուղևորությունների ժամանակ Վենետիկ էր եկել, իսկ հանդիպել եմ նրան առաջին անգամ,- այս ասելուց հետո Վարպետը նորից ժպտաց և շարունակեց,- հանդիպել եմ 1907 կամ 1908 թվերին Ղարսում: Իջել էի հյուրանոցներից մեկում, որի առաջին հարկում մի պարսկահայ, Աբգար անունով, գորգի խանութ ուներ. ի դեպ, դա Չարենցի հայրն էր. մի օր

կանգնել էի այդ գորգավաճառի խանութի դռան առաջ, մեկ էլ դեմս ելավ մի վտիտ, կարճահասակ պատանի սուր ու ծուռ քթով: Ոտները չռած կանգնած դիմացս և ճնշող հայացքով, առանց աչք թարթելու, սկսեց նայել ինձ, ձեռքին էլ մի գիրք կար փոքրիկ ֆորմատով: Մի երկու անգամ շուտ ու մուռ եկա՝ ազատվելու համար այդ պատանու խուզարկու հայացքից, բայց տեսա, որ հնար չկա, նա աչքերը չէր կտրում երեսիցս, մոտեցա ու մի ապտակ տվի: Տղան այլևս չմնաց, թողեց ու կորավ: Անցավ ժամանակ: Արտասահմանում գտնվածս միջոցին, մի օր Վենետիկից ոչ հեռու գտնվող Պատուա կոչված վայրն էի գնացել, այդտեղ մի հայ բժիշկ պետք է վիրահատեր որդուս նշագեղձերը, ուզում էի ներկա գտնվել վիրահատմանը: Նույն օրը ուշ երեկոյան Վենետիկ վերադարձա, հյուրասենյակումս հանդիպեցի մի երիտասարդի՝ բավական ազատ ձևով բազկաթոռին նստած, ոտքը-ոտքին դրած, ծխախոտը բերանին՝ ինձ սպասելիս: Առաջին տպավորությունս վանիչ էր: Ինձ տեսնելուն պես երիտասարդը տեղից վեր ցատկեց և «Չարենցն եմ» ասելով ներկայացավ ինձ: Եղիշեի պոեզիային լավ ծանոթ էի, ուստի անունն իմանալով վրա պրծա և ճակատը համբուրեցի: Չարենցը հիշեցրեց ինձ 1908 թվականին իրեն հասցրածս ապտակի մասին և ավելացրեց, որ այն ժամանակ իր ձեռքում իմ «Երգեր ու վերքեր»-ն է եղել, որը կարդացած լինելով, ուզեցել է տեսնել ինձ: Ասաց նաև, որ կարծելով, թե բանաստեղծը արտասովոր մարդ պետք է լինի, ակնապիշ նայել է ինձ: Բանաստեղծին սրբացած մարդ կարծելու պահին, երբ ապտակդ կերա,- ավելացրեց Չարենցը,- ամեն ինչ իրար խառնվեց, թողի ու հեռացա:

Արարքս այլ կերպ բացատրել չկարողանալով՝ ժպտացի և ասի.

- Եղիշ ջան, ընդունիր այդ ապտակս որպես «ուստա սիլլասի»:

- Այս ասելով ես ժպտացի, ժպտաց նաև Չարենցը, որ շատ լավ հասկացավ ասածիս իմաստը:

Այդ առաջին իսկ հանդիպմանս մտերմացա Չարենցի հետ, և որովհետև ծանոթ էի Երեքի դեկլարացիային (Չարենց, Աբով, Վշտունի), դիմելով նրան, ասի.

- Եղիշ, ի՞նչ էք ուզում մեզանից, ինչու՞ էք դուրս եկել Թումանյանի, իմ և Տերյանի դեմ, ի՞նչը դրդեց ձեզ ժխտել մեր պոեզիան:

- Ուզում էինք գրական պառնասում տեղ բացել նորերիս համար:

- Քեզ համար առանց գահակալական կովի էլ տեղ կտանք, մյուսների բանը դժվար է:

- Վարպետ,- դիմելով Իսահակյանին, հարցրի ես,- ինձ հետաքրքրում է մի այլ բան ևս.

Տվե՞լ էք արդյոք առիթ Չարենցին «Էլեգիա»-ում գրվածի համար:

Վարպետն իսկույն հասկացավ միտքս և հարեց.

- Այն մտքերը, որ վերագրել է Չարենցը ինձ, ինձ համար անբացատրելի է:

Վերածնվող Հայաստանի մասին Չարենցի հաղորդած տեղեկությունները սրտանց ուրախացնում էին ինձ, և նա զգում էր ու տեսնում իմ բերկրանքը:

Վարպետը դառը ժպիտը դեմքին շատ անկեղծ ձևով հավաստեց, որ այդ ամենը իրականությանը չի համապատասխանում, ինքը նման տրամադրություններ չի արտահայտել ամենևին և վերջում էլ ավելացրեց, որ Չարենցը իզուր է այդ մտքերը իրեն վերագրել: Մի պահ Վարպետի դեմքը մռայլվեց և ապա, մտքում ներելով Չարենցին, ավելացրեց.

- Ափսոս, որ Եղիշը քիչ մնաց Վենետիկում, շատ հետաքրքիր գրուցակից էր:

- Իսկ ինչու՞ այդպես շուտ մեկնեց Վենետիկից, Վարպետ:

- Մյասնիկյանի մահվան լուրը շանթահար արեց Եղիշին, նա շատ էր սիրում Ալյոշային:

Նրա շնորհիվ էր, որ Չարենցը ուղարկվել էր արտասահման: Իմ երրորդ հանդիպումը

Չարենցի հետ,- շարունակեց Վարպետը,- տեղի ունեցավ 1927 թվականի հունիսին, երբ ես

արտասահմանից վերադարձա հայրենիք: Նոր էի ժամանել Երևան, երբ ականջիս հասավ Եղիշեի ուղղիչ տուն ընկնելու լուրը: Հարցուփորձ արի ընկերներիս բանտարկության պատճառի մասին, պարզվեց, որ սիրային հողի վրա վիրավորել էր իր սիրածին: Մարդ սիրածի վրա էլ ձեռք կբարձրացնի⁶, եզրափակեց Վարպետը ասելիքը: Հաջորդ օրը քայլերս ուղղեցի դեպի ուղղիչ տուն: Չարենցը ինձ ընդառաջեց շատ սիրալիր, ես էլ շատ ուրախ էի, որովհետև ազատ զբոսնում էր այնտեղ, մարդիկ էին գալիս-գնում մոտը:

- Սա սանատորիա է, Եղիշ ջան,- ասի նրան, բանտը մեր նստածն էր՝ Մետեխը:

Չարենցի մասին իր սկսած պատմությունը դեռ ավարտին չէր հասցրել, երբ զանգահարեցին և հայտնեցին, որ ինչ-որ մարդ է գալու մոտը, ուստի Վարպետը աշխատեց շտապ վերջացնել պատմելիքը և սկսեց կակազել:

- Իմ վերջին հանդիպումը Չարենցի հետ տեղի ունեցավ մեր տանը: Չարենցը ապրում էր իմ տնից ոչ հեռու, ուստի հաճախ բակի կողմից պարտեզով գալիս էր մոտս: Մի օր էլ առավոտ վաղ, ով իմանար, որ դա վերջին առավոտն էր լինելու, ես դեռ պառկած էի ու ինչ-որ գիրք էի թերթում, դուռը ուժեղ բախեցին: Երբ մերոնք դուռը բացին, ներս մտավ Չարենցը դարսեցի մի տղայի հետ. սաստիկ վրդովված էր: Իմանալով Չարենցի գրգռվածության պատճառը, աշխատեցի հանգստացնել նրան:

Ընդհատելով ասելիքը, Իսահակյանը գրասեղանի դարակից դողդողացող ձեռքերով հանեց մի լուսանկար և ցույց տվեց ինձ: Ինքն ու Չարենցն էին՝ լուսանկարված Վենետիկի Մուրբ Մարկոսի հրապարակում: Չարենցի ձեռքում մի աղավնի կար նստած:

- Վարպետ, ի՞նչ կարծիք ունեք Չարենցի գրական ժառանգության մասին, ո՞րն է Ձեր կարծիքով նրա լավագույն ստեղծագործությունը,- հարցրի ես:

- Եթե ինձ հարցնես՝ ամենալավը «Ես իմ անուշ Հայաստանի»-ն է: Հավանում եմ նրա «Տաղարանը» ևս, հատկապես «Կուզեմ հիմի փչե գունան», ինչպես նաև «Դոփում են ձիերը» և ուրիշները: Ինքը՝ Չարենցը, - ավելացրեց Վարպետը, - շատ էր սիրում «Դանթեական առասպելը» և «Խմբապետ Շավարշը»: Չարենցի մասին իր հուշերի մնացած մասը Վարպետը ժամանակ չունեցավ պատմելու:

Շիրազի մասին, իբրև բանաստեղծի, Իսահակյանը լավ կարծիք ուներ: Շատ էր հավանում նրան, դեռևս արտասահմանում եղած ժամանակ հետաքրքրվել էր նրանով: Հիշում եմ, մի անգամ Գրողների տանը Շիրազն արտասանեց իր «Բիրլիականը», Վարպետն էլ ներկա էր, շատ հավանեց: Տուն վերադառնալիս, ճանապարհին Իսահակյանը ուրիշ-ուրիշ բաների մասին էր խոսում, մեկ էլ նորից խոսք բացեց Շիրազի մասին, գովեց և ապա դիմելով ինձ, հարցրեց.

- Դու ի՞նչ կարծիքի ես:

- Ի՞նչ ասեմ, Վարպետ: Շիրազն իրոք որ բնածին տաղանդ է: Իսահակյանը գլխով հավանության նշան արավ և ավելացրեց.

- Ճիշտ ես ասում: Աստվածայինը կա Շիրազի մեջ...

Իմ մի այլ այցելության ժամանակ Վարպետին գտա գրասեղանի առաջ նստած, շատ տխուր, ընկճված վիճակում հայացքը հառած ոտքերի մոտ նստած Մարս անունով շանը: Մարսը ազնիվ ցեղի մի հսկայական շուն էր մուգ-շագանակագույն, որին պոետը բերել էր Վենետիկից: Շունը քանի օր է, ինչ հիվանդ էր, և դա խիստ մտահոգություն էր պատճառել Իսահակյանին: Կարծելով, որ ես այդ չեմ հասկանա, Վարպետը, դիմելով ինձ, ասաց.

- Լավ շունը վատ մարդուց լավ է, ծանոթ շները չեն հաչում վրադ, ծանոթ մարդիկ են հաչում քո վրադ, իսկ Մարսը երբեք վրաս հաչած չկա, շատ խելացի և տիրասեր կենդանի է: Անասնաբուժական ինստիտուտից խոստացել են գալ, նայել ու բուժել, մեղք է: Վրաս

շատ ազդել է, տրամադրությունս ընկած է, գրիչ բռնել չեմ կարող: Այս ամենը պատմելիս, ես հիշեցի Իսահակյանի մի պատմվածքը «Ընկերը» խորագրով: Երկու ընկերներ են լինում՝ մեկը հետագայում հարստացած, մյուսը՝ աղքատ: Մի օր աղքատը գնում է այդ հարուստ ընկերոջ մոտ օգնություն խնդրելու մտադրությամբ: Հարուստը դժկամությամբ է ընդունում նրան և ճաշի անգամ չի պահում: Մեկնելով հարուստ ընկերոջ տանից, աղքատը դռան մոտ մի հսկայական շուն է տեսնում՝ թաթերի մեջ մի մեծ կտոր հաց: Երբ սովահար աղքատը անցնում է շան կողքով, վերջինս թաթերով հացը քշում է աղքատի կողմը: Հուզված կենդանու այդ արարքից աղքատը խորը հոգոց հանելով ասում է՝ մարդը շուն է դառել, շունը՝ մարդ: Մի քիչ զրուցելուց հետո թողի Վարպետին և քայլերս ուղղեցի դեպի տուն:

Իմ՝ Իսահակյանի հետ ունեցած բազմաթիվ հանդիպումներից մեկի ժամանակ նա հողորդեց ինձ, որ Դամասկոսում արաբերեն թարգմանել և տպել են իր «Աբու -Լալա Մահարի»-ն: Ես շատ ուրախացա:

-Ուզում եմ «Աբու-Լալա Մահարի»-ի այդ հրատարակության առթիվ «Գրական թերթում» մի բան գրել,- հայտնեցի ցանկությունս Իսահակյանին և երեկոյան այցելեցի Վարպետին: Այդ օրը շատ բան իմացա պոետից: Նա ինձ պատմեց «Աբու-Լալա Մահարի» պոեմի գրության շարժառիթների մասին, որը հերքում է այն ենթադրությունը, թե իբր պոեմի համար սկզբնաղբյուր է եղել հայտնի արևելագետ Կրաչկովսկու աշխատանքը և այլն:

-1909 թվականն էր,- այսպես սկսեց Իսահակյանը,- վեցամսյա բանտարկությունից հետո գրավականով ազատվեցի Մետեխի բանտից և վերադարձա Ալեքսոլ: Այստեղ մի քանի օր մնալուց հետո Լիժինի կարգադրությամբ կանչվեցի Երևան՝ հարցաքննության: Քննիչի բարդած նոր մեղադրանքներն իմ հակացարական գործունեության առթիվ նորից բանտ նետվելու լուրջ վտանգի առաջ կանգնեցրին ինձ: Իմ մեջ հարածուն կերպով հասունանում էին փախուստի տրամադրությունները: Երևանում մի քանի օր տևող հարցաքննության հետ կապված գործերս վերջացնելուց հետո շտապեցի վերադառնալ ծննդավայրս: Կայարանում հանդիպելով ինձ ծանոթ մեքենավարին, տեղավորվեցի նրա շոգեքարշի մեջ: Երբ գնացքը դուրս եկավ կայարանից, անցա լոկոմոտիվի վանդակապատ պլատֆորմը և սկսեցի դիտել շրջակա լեռները, հեռագրաայուները, երկաթգիծը, որոնք գնացքի ընթացքի հետ փախնում էին աչքիս առջևից: Քանի գնացքը արագացնում էր ընթացքը, այնքան ավելի կրկնապատկում էին իմ մեջ փախուստի տրամադրությունները: Մտածում էի, թե ինչքան լավ կլիներ, եթե գնացքը առանց կանգառի գնար այդպես անընդհատ գնար, դուրս գար երկաթգծից, ցարական տիրակալության սահմաններից և գնար, գնար հեռու, հեռու... Այս մտածումների մեջ էի, երբ հասանք Սարդարապատ: Լուսնյակ գիշեր էր, հեռվից նշմարեցի Կողբի կողմից եկեղ ուղտերի մի երկար ու ձիգ քարավան: Գնացքով փախչելու մտածումներս իսկույն զուգորդվեցին քարավանի հետ և փոխանցվեցին քարավանով փախչելու ցանկության: Այնուհետև սկսեցի մտածել զգացումներս ու մտածումներս դրսևորելու համապատասխան ձև գտնելու մասին: Եվ երբ վերադարձա Ղազարապատ՝ գրեցի պոեմս: Այն էլ ասեմ, որ պոեմիս լիրիկական հերոսը շատ ընդհանուր բաներ ունի ինձ հետ, դա իմ մտորումներն են և ոչ պատմական Աբու-Լալա Մահարու: Աբու-Լալա Մահարու մասին ես առաջին անգամ կարդացել եմ 1908 թվականին, պոեմիս գրությունից մի տարի առաջ, Իոհաննես Շերրի «Համաշխարհային գրականության պատմություն» գրքում, ինչպես նաև դոկտոր Աբերլանդի «Արևելքի ժողովուրդների գրականությունները» աշխատությունում:

- Իսկ ակադեմիկոս Կրաչկովսկու աշխատության հետ ծանոթ էիք այն ժամանակ,- հարցրի ես Իսահակյանին: Իմ այդ հարցին Վարպետը կտրական պատասխան տվեց,

ասելով.

- Չէ, այդ աշխատության հետ ես ծանոթացա պոեմն գրելուց հետո միայն:

Այնուհետև մեր խոսակցությունը Իսահակյանի հետ գնաց այլ ուղղությամբ և որովհետև արդեն բավական ժամանակ զբաղեցրել էի Վարպետին և հյուրեր պիտի գային, հրաժեշտ տվի նրան և հեռացա, տանելով հետս հիշյալ հետաքրքրական տեղեկությունները բանաստեղծի հռչակավոր պոեմի գրության պատմությանը վերաբերող:

Հայաստանի Պետական պատմական թանգարանը Վարպետի սիրած կուլտուրական օջախներից մեկն էր: Թանգարանի դիրեկտոր Կարո Ղաֆադարյանը, բանիմաց, մեծի հարգը իմացող մարդ լինելով՝ դարձել էր Վարպետի ուշադրության արժանի անձնավորություններից: 1939 թվականի ապրիլի սկզբներին էր կարծեմ, մի գործով գնացել էի նրա մոտ, Վարպետն էլ այնտեղ էր: Կարոն զբաղված էր թանգարանի հսկայական խաչքարերը մի տեղից մյուսը տեղափոխելու գործով: Խոսելու շատ ժամանակ չկար, այդ նկատելով, Իսահակյանն ասաց.

- Օննիկ, երեկոյան Կարոյի հետ անցեք ինձ մոտ՝ մի քիչ զրուցենք:

Երեկոյան Ղաֆադարյանի հետ բռնեցինք Վարպետի տան ճանապարհը: Իսահակյանին գտանք հագնվելիս, ճաշից հետո քնել էր ու նոր էր տեղից վեր կենում: Շատ սիրալիք ընդունեց, ծխախոտ առաջարկեց: Երկուսս էլ միաբերան հրաժարվեցինք, պատճառաբանելով, որ մենք էլ ունենք: Վարպետը նեղացավ, «վայրենիներ հո չեք», ասաց և այդ բանի վրա հետևյալ առակը պատմեց.

«Մի անգամ մի ուղտ մի ուրիշ ուղտի մի փունջ խոտ է տալիս: Երկրորդ ուղտը պատասխանում է. «Տվածդ ի՞նչ է, խոտ, ես էլ ունեմ, դրանից ամեն տեղ էլ կա»: «Այ ուղտ, - պատասխանում է առաջինը, - բանը ունենալու մեջ է»: Հիմա ձերն է, ես ձեզ կամեցա պատվել, իսկ դուք առակի միջի ուղտի պես եք վարվում հետս: Այս խոսքերի վրա երկուսս էլ մեր ծխախոտի տուփերը պահեցինք և սկսեցինք ծխել Իսահակյանի առաջարկածը: Այնուհետև Իսահակյանը խոսեց իր բանաստեղծությունների նոր հրատարակելիք ժողովածուի մասին:

- Ես կարծում էի, թե քիչ եմ գրել, բայց հրատարակության պատրաստելիք ժողովածուիս կապակցությամբ հաշվեցի, և պարզվեց, որ 400 բանաստեղծություն եմ գրել, Թումանյանը ավելի քիչ է գրել՝ 200, Պուշկինը՝ 400-500, Հայնեն՝ 700: Իսկ...

- Իսկ Հյուգոն, - հարցրի ես Վարպետին:

- Չէ, նա շատ է գրել: - Այս խոսակցության ժամանակ հյուրասենյակից եկող կանացի քայլերի ձայն լսվեց: Իսահակյանը վեր կացավ տեղից, - երիտասարդ կնոջ ոտքերի ձայն լսեցի, սիրտս թրթռաց, սպասեք, գնամ տեսնեմ ի՞նչ գոգալ է եկել, - նույն բոպեին նա ետ վերադարձավ ժպիտը դեմքին:

- Ըստ երևույթին երես հանելու բան չէր «գոգալը», - կամաց ձայնով ասի ես:

- Ի՞նչ գոգալ, - շշուկով պատասխանեց Իսահակյանը, - սև ու պառավ ագռավ էր: - Այժմ չեմ հիշում ինչ առիթով, Կարոն խոսք բացեց Թորամանյանի և Անիի մասին: Այդ խոսքի վրա Իսահակյանը գրասեղանի դարակից հանեց իր սիրած «Անի» բանաստեղծությունը: Ապա ընթերցեց «Ժողովրդի քնարը» լեգենդը: Խոսք բացվեց Տերյանի մասին.

- Վարպետ, գիտե՞ք, որ «Հրաշք աղջկա» մեղմախոս այդ երգիչը մի ոտանավոր ունի գրած, հախուռն թափով ու հայրենասիրական մեծ պաթոսով, - ասացի ես և իսկույն արտասանեցի Տերյանի «Մի խառնեք մեզ...» բանաստեղծությունը:

- Որտեղի՞ց, ինչպե՞ս ես հայտնաբերել այդ ոտանավորը, շատ վսեմ բան է, բայց փոքր-ինչ անմշակ է:

- Տերյանի արխիվից է, - պատասխանեցի ես, - Մակինցյանը ինչ-ինչ պատճառով

հնարավոր չի համարել տպել այն: Այդ ոտանավորը թանգարանի դիրեկտորը չէր թողնում արտագրել: Մի քանի անգամ գնացի, կարդացի և անգիր արի: Վարպետը խնդրեց, որ մեքենագրել տամ այդ ոտանավորը և իրեն հանձնեմ: Խնդիրքը շուտով կատարեցի, բանաստեղծության մեքենագիր օրինակը երկու օր անց հանձնելով Իսահակյանին, ասի.

- Տերյանի այս ոտանավորը ձեր գրած «Մեր նախահայրերի», Պեշիկթաշյանի «Գարուն»-ի և Չարենցի «Ես իմ անուշ»-ի հետ հայ հայրենասիրական քնարի մշտահոլով նվագներից է: Իսահակյանը Չարենցի անունը լսելով հուզված ասաց. - Եղիշեն... այլևս չկա, երկու օր առաջ ստույգ տեղից իմացա այդ ահավոր լուրը: Այդ օրը խոսեցինք նաև Իսահակյանի «Բանաստեղծի երագը» ընդարձակաշունչ բանաստեղծության մասին, որը շատ բնորոշ է նրա ռոմանտիկական երգերի համար: Վարպետը համաձայնվեց.

- Գրել եմ հին ձևով, կաշկանդող չափերով: - Վենետիկում եղած ժամանակ ուզում էի վերածել արձակի: Սկզբից էլ արձակ էի ուզում գրել, բայց վենետիկցի հայերը ասին, թե նյութը բանաստեղծական է, ես էլ չափածո գրեցի: Նույն այդ հանդիպման ժամանակ Վարպետը կարդաց ինձ «Ուստա Կարո»-ից մի հատված, որ նոր էր վերամշակել ժողովածուի համար: Այդ երեկոյան պայմանավորվեցի բանաստեղծի հետ, որ մյուս օրը առավոտից պատրաստ լինի՝ Ղաֆադարյանի հետ գնալու ենք մոտը՝ Ժողտուն գնալու համար, որի կառուցման աշխատանքները դեռ չէին ավարտվել: Բաժանվելու ժամանակ վարպետը խնդրեց բարևներ հաղորդել եղբորս: Ինչպես արդեն պայմանավորվել էինք, հաջորդ օրը (ապրիլի 6-ին) առավոտյան ժամը 10-ի մոտերքը Ղաֆադարյանի հետ գնացինք Իսահակյանի մոտ: Վարպետը կազմ ու պատրաստ սպասում էր մեզ իր տան առաջ: Հեռվից նկատեցինք, որ նա հայացքը հառել է երկնքի կապույտում ճախրող սավառնակին: - Վարպետ, երբևէ սավառնակ նստե՞լ էք, - հարցրի ես՝ մոտենալով նրան:

- Չէ, իմ երևակայությունը ավելի բարձր է թռչում, քան սավառնակը: Ես հողի մարդ եմ, գետինը թողած օդեն երթալ չեմ ուզում: Երեկ ձեր գնալուց հետո, - շարունակեց իր խոսքը Իսահակյանը, - ամբողջ գիշերը նստած մի արձակ բանաստեղծություն գրեցի: Գուցե արձակ գրածներս ավելի լավ դուրս գան, քան չափածո գրածներս են:

- Ձեր չափածոն գերազանց է, - պատասխանեցի ես:

- Իսկ արձակ կա, - հարցրեց Վարպետը:

- Իսահակյանն արձակի մեջ էլ Իսահակյան է, - պատասխանեցի ես:

Մենք երեքով շարժվեցինք Ժողտան կողմը: Հասնելով Ժողտանը՝ բարձրացանք աստիճաններով: Վերևի հարկը դժվար էր բարձրանալ, սանդուղք չլինելու պատճառով: Մյուսները տախտակների վրայով մագլցեցին, բայց ես Վարպետին չթողի:

- Այդքանն էլ բավական բարձրություն է Ձեր տարիքի համար, բարձր մարդը կարիք չունի այդ ձգտումն ունենալու:

- Ենթարկվում եմ խնամակալիս, - ասաց Վարպետը, կանգնած տեղից (երկրորդ հարկից) նայեց այդ վիթխարի կառույցին, որն ավարտելու համար դեռ շատ աշխատանք է պահանջվում: - Իմ Ուստա Կարոն էլ էսպես է: Անսահման աշխատանք է պահանջում դեռ, մանավանդ որ ես ծանր եմ գրում, մտածելով, խնամքով, ապա թողնում, որ մնա սառի, որպեսզի կարողանամ օտարի աչքով և անաչառ նայել գրածիս վրա: Մինչ Ղաֆադարյանը երրորդ հարկից զգուշությամբ վայր էր իջնում, մենք արդեն ներքևում էինք, և Վարպետը շարունակում էր խոսել իր «Ուստա Կարո»-ի մասին:

- Վեպս սկսել եմ գրել տակավին 1911 թվականից: Ուստա Կարոյի նախատիպը մի նախիջևանցի է, բայց, իհարկե, «Ուստա Կարո»-ն հավաքական տիպ է: Փիլիսոփայող, խորհող, ռեալիստական խորքով տիպ: Հաշվել եմ, վեպս մեկ միլիոն տառ ունի, եթե գիրք դարձնենք, մոտ ութ հարյուր էջ կբռնի: Նյութը հետաքրքրական է, Շիրակի կյանքից

առնված, գործողության վայրը Շիրակն է, Անին: Վեպս փիլիսոփայական հենքով ստեղծված գործ է, ֆոլկլորով համեմված, բազմաթիվ գործող անձերով, բարդ կառուցվածք ունի: Տիպերը հարազատ միջավայրից են առնված, շատերն էլ ծանոթ մարդիկ են: Կապիտան Ղազարը, օրինակ, հորեղբորս որդու տղի աներն էր: Հիմի կասես նապաստակի ջրի ջուրը: Շրջիկ կայծակի նախաստիպը իմ մոտիկ բարեկամ մի քննադատ էր: Շատ բան կա վեպում, որ հյուսել եմ իմ տեսածի ու լսածի հիման վրա, իմ մանկության օրերի կյանքից: Կապիտան Ղազարին վերաբերող հաստվածը իմ հավանած մասն է, գուցե նրանից է, որ մանկությանս տարիների վերաբարտադրությունն է: Արտասահմանում եղածս ժամանակ, երբ աշխատում էի վեպիս վրա, զգում էի, որ շատ անհրաժեշտ է նորից լինել այդ միջավայրում, տեսնել երկիրը, ստուգել տիպերն ու պատկերները, շնչել հարազատ միջավայրի օդը, նորից լսել բարբառը: Ահա թե ինչու չշարունակեցի գրել այնտեղ: Ձեռագիրը մնաց դեղին ճամպրուկիս մեջ, անօդ, անարև և դեղնեց ու խամրեց: Ախր նյութական միջոցներս էլ վատ էին, մի թե կարող էի այդքան երկար նստել մի գործի վրա, առանց մտածելու հաց ճարելու մասին: Իսկ այստեղ, ճիշտ է, նյութապես ապահով եմ, բայց այստեղ էլ խանգարողները շատ են, գնացող-եկող, ընկեր-բարեկամ, չեկած ժամանակներն էլ ես եմ գնում նրանց մոտ, ես էլ Օհաննեսի պես խանգարված գրող դարձա: Հետո միշտ մանր-մունր բաներ են մեջ ընկնում , բանաստեղծություն, էլույթ, ճառ: Վերջապես վեպս պահանջում է նաև որոշ վերակառուցում: Ես եղածից դժգոհ եմ, նա չեղավ իրականացումը իմ շքեղ տեսիլների և երազների և ինչպես Օհաննեսի «Հառաչանքը», իմ վեպն էլ իմ փափագիս մնացորդն է միայն: -Լավ, ջան, ինձանից հետո ինչ կուզեն, թող անեն: Ինչ ասեմ, ամեն գիրք իր ճակատագիրն ունի, լավ աստղի տակ չծնվեց «Ուստա Կարո»-ն: Ես կարծում էի, թե այս խոսքերով արդեն ավարտեց Վարպետն իր ասելիքը: Բայց մեկ էլ նորից շարունակեց.

- Անիում կատարած շրջագայությունների ժամանակ Ուստա Կարոյի մեջ արթնացած բոլոր խոհերն ու մտորումները իմ խոհերն ու մտորումներն են: Կարճ ասած, իմ հոգին դրել եմ «Ուստա Կարո» -ի մեջ: Ես էլ զարմանալի կերպով ինձ Անիի քաղաքացի եմ համարում: Շատ եմ սիրում Անին, հասկանում և եք: Անին հայ մշակույթի հայելին է: Իսկ գիտե՞ք ինչ է նշանակում «Անի» բառը, և, չսպասելով մեր պատասխանին, շարունակեց. Անի սանսկրիտերեն նշանակում է հուր, կրակ և դրա համար այդպես այրում, վառում է այնտեղ եղողին ու տեսնողին: Իսահակյանը, որ ներքնապես հուզված էր արդեն, մի պահ դադար առավ և հետո ավելացրեց իր ասելիքը: Խ. Աբովյանի հայտնի տողով.

-Անի~, Անի~, ա~խ, Անի~...

Կարո Ղաֆադարյանը, որ հետը բերել էր լուսանկարչական գործիքը և միտք ուներ մեզ նկարելու, չկարողացավ իրագործել նպատակը: Ժողտան բակում հայտնվեցին մի քանի ծանոթներ , որոնց մեջ կային Իսահակյանի համար տհաճ դեմքեր, դրանց պատճառով մնացածներին էլ չկարողացանք հրավիրել, իսկ մենակ նկարվելն արդեն չէր լինի:

Որոշեցինք հետաձգել մինչև հաջորդ հանգստյան օրը:

-Ավելի լավ է գնալ Հրազդանի փիղ և այնտեղ նկարվել,- ասաց Վարպետը:

Այդ մտադրությամբ էլ մեր զբոսանքից տուն վերադարձանք:

Մի քանի ժամանակ անց Վարպետին հանդիպեցի թանգարանում, ուր դերասան և լուսանկարիչ Արտաշես Վրույրը, որն աշխատում էր թանգարանում, նկարեց մեզ միասին:

Մի անգամ մեր գերմաներենի դասախոս Հակոբ Հարությունյանի հետ համալսարանից ոտքով իջնում էինք Աբովյան փողոցով: Այժմյան ռուսական թատրոնի մոտ հանդիպեցինք Իսահակյանին, որը նոր էր ապաքինվել ծանր հիվանդությունից:

- Լուսը Ձեզ տեսնողին, սիրելի Վարպետ, լսել էինք, որ հիվանդ էք եղել:

- Հա, սիրելիներս, հազիվ պրծա, քիչ մնաց էն աշխարհը գնայի,-ասաց Վարպետը և, դիմելով Հակոբին, ծխախոտ ուզեց՝ ասելով,- քանի որ մուննաթ արի, պիտի հաստ փաթթեմ:

Հակոբը ծիծաղեց Իսահակյանի այդ խոսքերի վրա: Հանկարծ Վարպետը սկսեց ակնդետ հայացքով նայել հեռվից երևացող մի ծանոթ երգչուհու:

-Մինչև չբարևեմ սրան, չեմ գնա:

Երբ երգչուհին մոտեցավ, Վարպետը մի հայացքով չափեց նրան վերից վար, ապա երկուստեք ժպտացին և բարևեցին: Երբ երգչուհին հեռացավ, դիմելով Իսահակյանին, Հակոբն ասաց.

-Ձեռքդ ի՞նչ ընկավ, Վարպետ:

-Աստղերն էլ ձեռքդ չեն ընկնում, սիրելի Հակոբ, բայց որ նայում ես, հաճույք ես զգում,- պատասխանեց Վարպետը:

Անհասանելի աստղերից շուտով անցանք պոեզիայի հարցերին, ես հիացմունքս հայտնեցի Վարպետի «Ապրած իմ կյանքից մի սուրբ երազի» ոտանավորի առթիվ, ուր պոետը մի քանի տողի մեջ բնորոշել է մանկան հոգեբանությունը:

-Լավ, շատ լավ ոտանավոր է: Ձեր բանաստեղծության մասին Տերտերյանն էլ հիացմունքով է խոսում,- դեռ խոսքս չէի ավարտել, վարպետը շուտ եկավ և կես-կատակ, կես-լուրջ ասաց.

-Ես վատ ոտանավոր չունեմ,-և ապա ավելացրեց,-գիտե՞ս ինչ, սիրելիս, մի անգամ նույնպիսի մի բան է ասել մեկը Վարուժանի «Վարուժանակիս» բանաստեղծության մասին: «Ես վատ ոտանավոր գրած չունիմ», -պատասխանել է Վարուժանը:

Բավական երկար այսպես դեսից-դենից խոսելուց հետո Իսահակյանը խնդրեց, որ Հակոբի հետ այցելենք իրեն:

-Շատ ուրախ կլինեմ, եկեք, միայն թե չխաբեք, կսպասեմ,-ասաց Վարպետը և հրաժեշտ տվեց մեզ:

Հակոբն այդ օրերին տպագրել էր մի ընդարձակ հոդված Կոմիտասի մասին և ուզում էր նվիրել Վարպետին, ես էլ ուզում էի Իսահակյանի մասին գրածս գրքի համար նրա մի լավ լուսանկարը վերցնել «Հայրենի աղբյուր» ոտանավորի ինքնագրի հետ միասին:

Պայմանավորված օրը Հակոբ Հարությունյանի հետ գնացինք Վարպետի մոտ: Հակոբը մի շատ հոգեբույս մակագրությամբ նվիրեց իր աշխատանքը պոետին: Կարծելով, թե ես տեղյակ չեմ իր և Հակոբի վաղեմի բարեկամներ լինելու հանգամանքին, Իսահակյանը, դիմելով ինձ, ասաց.

-Օննիկ, գիտե՞ս, որ ես Հակոբի վաղուցվա ծանոթն եմ, Հակոբին ես դեռ Գերմանիայից գիտեմ, ուր ուսանում էր նա. երկու տարի շարունակ Կանտ էր ուսումնասիրում: Որ ժամին որ գնայիր մոտը, անկողնում նստած կամ պառկած, եղունգները կրծելով Կանտ էր կարդում: Միայն երեկոներն էր, որ պոկ էր գալիս գրքից: Մի գերմանուհի ուներ Հակոբը, գրեթե ամեն օր, երբ վրա էր հասնու մթնշաղը, այդ աղջիկը գալիս կանգնում էր Հակոբի տան լուսամուտի տակ և շվացնում էր հայկական հայտնի մի երգ. Հակոբս այդ լսելով դուրս էր վազում. թե ուր էին գնում, այլահը գիտե:

-Երևի աստղերի հետ զրուցելու,-վրա բերի ես:

-Չէ, աստղերի հետ նա հաշիվ չունեիր: Հայ գիդի Հակոբ,- ասաց Վարպետն ու ձեռքը խփեց նրա ուսին: Հակոբը ժպտաց և դրանով հարցը փակեց:

Այնուհետև դիմելով ինձ, Վարպետն ասաց.

-Գիրքդ ե՞րբ է լույս տեսնում, որ ինքնագիր ու լուսանկար ես ուզում ինձանից:

-Շուտով երևի լույս աշխարհ գա:

Մեր գրույցը թերևս էլի երկարեր, բայց մարդիկ եկան, և մենք հրաժեշտ տվինք Վարպետին ու հեռացանք:

1940 թվականի հոկտեմբերին լույս տեսավ իմ «Իսահակյանի լիրիկան» գրքույկը. այդ առիթով Վարպետին և Հակոբ Հարությունյանին հրավիրեցի ճաշի: Ճաշն անցավ սրտագին մթնոլորտում: Հակոբ Հարությունյանը դաշնամուրի վրա նվագում ու երգում էր իր անմահ ուսուցչի՝ Կոմիտասի նշանավոր երգերը: Իսահակյանը, հիացած Հակոբի երգ ու նվագով, ամբողջովին լսելիք դարձած, ունկնդրում էր նրան:

Դաշնամուրի առաջ կերպարանափոխված ու վերացած Հակոբը կատարեց նաև Չարենցի «Գարուն» և Իսահակյանի «Հե՛յ ջան, հայրենիք» բանաստեղծությունների իր ձայնագրությունները ևս, որով թունդ հանեց մեր հոգիները:

-Սիրելի Հակոբ,- ասաց Իսահակյանը,- հիմա եմ հասկանում, թե ինչու Կոմիտասը ուզում էր ինչ գնում էլ լինի քեզ տանի իր հետ Պոլիս, իր տնօրինելիք կոնսերվատորիայում իրեն օգնական:

Ճաշից հետո Վարպետին ու Հակոբին նվիրեցի իմ անդրանիկ գրքույկը: Իսահակյանին նվիրած օրինակի վրա գրել էի.

Իմ թոթով գրչի
Վաստակն այս չնչին,
Չքնաղ Մանթաշի
Աննման երգչին:

Կարդալով քառատողս՝ Վարպետն աչքերը կկոցելով ասաց.

-Հինգ վանկանի յամբ անապետյան ոտանավորի չափով է գրված քառյակդ, հանգերն էլ աղքատ չեն, գրիչդ ամեննին թոթով չէ, ապրես:

1940 թվականի ամռանը Իսահակյանը մեկնել էր Թիֆլիս, այնտեղից էլ շրջագայության ելել Ախալցխայի ու Ախալքալաքի կողմերը: Երբ շուրջ երկու ամիս տևող այս ճանապարհորդությունից վերադարձավ Երևան, ես շտապեցի գնալ մոտը՝ իմանալու համար նրա ստացած տպավորությունները մեր քաղաքից: Հեռախոսով հայտնեցի տիկին Սոֆիին, որ երեկոյան մի ախալցխացի ընկերոջ հետ ուզում եմ այցելել Վարպետին:

-Շատ ուրախ կլինենք, համեցեք:

Պայմանավորված ժամին գնացինք Իսահակյանի մոտ: Գրասեղանի առաջ նստած գիրք էր կարդում: Բարևելուց հետո, խոսքս ուղղելով բանաստեղծին, ասի.

- Սիրելի վարպետ, ինչպես ընդունված է ասել՝ կերածներդ Ձեզ, պատմեք տեսածներիդ մասին:

-Ի՞նչ պատմեմ. Ախալցխան լավ քաղաք է, հյուրասեր, գրասեր ու հայրենասեր մարդիկ են հայրենակիցներդ, օրինակ՝ նշանավոր հայկաբան Գալուստ Տեր-Մկրտչյանը, որի ուսումնասիրությունները կատարյալ հայտնագործություններ են: հապա Մտեփան Մալխասյանը, Հակոբ Մանանդյանը, վերջինիս հետ, ի միջի այլոց, բարեկամություն եմ արել դեռ արտասահմանում:

-Տեսնո՞ւմ եք, Վարպետ, ի՞նչ հայրենակիցներ ունեմ, բոլորն էլ ընտրովի մարդիկ են:

- Թող ես գովեմ երկրացիներիդ,- վրա բերեց Վարպետը և շարունակեց թվարկել,- Վարդգես Սուրենյանց, Հակոբ Կոչոյան... Սիրելի բարեկամ, ես առաջին անգամ չէ, որ լինում եմ Ախալցխայում:

-Գիտեմ,- վրա բերի ես,-1902 թվականին Ախալցխայի «Լոնդոն» հյուրանոցում է կարծեմ, որ գրել էք Ձեր «Հոգիս մռայլ էր» և այլ բանաստեղծություններ:

- Ճիշտ է, ճիշտ է: Դու իմ մասին ամեն բան գիտես, սկսում եմ վախենալ քեզնից: Սրտիս ու մտքիս գաղտնիքներն էլ քեզ լավ ծանոթ են: Բարեկամիս ասեմ, Ախալցխայում իջևանել

էի քո դասընկերներից մեկի՝ Սարիբեկ Հակոբյանենց տանը:

Շատ լավ մարդիկ են, թե ինքը, թե եղբայրը, թե քեռին՝ Ստեփը: Առավոտից երեկո հյուրասիրում էին: Նրա տանը անընդհատ խոնարհվում էր «ուտել» բայը: Հյուրասիրում էին լավ-լավ խմորեղեններով և Ախալցխայի հայտնի մրգերով, որոնց համը մինչև հիմա էլ բերանումս է: Ծանոթացա նաև ձերոնց հետ: Մի կիրակի հրավիրվել էի թուր ուտելու: Ախալցխայի փաշա թուրը մեղրի պես քաղցր է: Ի՞նչ ասեմ, դու ինձանից լավ գիտես: Հայրդ իմացել էր, որ ես այդ օրը ընկերոջդ այգում եմ, եկավ ինձ հրավիրելու ձեզ մոտ: Շատ ժիր, աշխույժ մարդ է, չնայած պատկառելի տարիքին՝ այնպես արագ բարձրացավ պարտեզի զառիվերը, որ ես մնացի զարմացած: Կարճ խոսք ու զրույցից հետո սիրով ընդունեցի հորդ հրավերը և հաջորդ օրը շքախմբով եղա ձեր տանը: Ինձ շատ լավ հյուրասիրեցին, ընտիր խմորեղեններ պատվեցին, շաքար-լոխումի և այլն:

Ախալցխայից մեկնելուց առաջ ընկերներդ մի թանկագին նվեր տվին ինձ «Ի հիշատակ», հիմա բերեմ, տես, ոսկերիչ ուստա Կարապետի շնորհալի ձեռքով պատրաստած արծաթե թանաքաման ու գրիչ է, շատ նուրբ բան է:

-Գիտեմ, գիտեմ,- վրա բերի ես,- ուստա Կարապետին էլ գիտեմ, հորս մոտ ընկերն է, նրա ձեռքի աշխատանքները իրոք հրաշալիք են:

Վարպետը բերեց ու սեղանին դրեց այդ թանկագին նվերը: Ուշ երեկոյան հրաժեշտ տվինք Վարպետին:

Իմ մի այլ հանդիպումը Իսահակյանի հետ տեղի ունեցավ 1940 թվականի հոկտեմբերի վերջին, նրա ծննդյան 65-ամյա հոբելյանի կապակցությամբ: Վարպետն իր տանը կազմակերպել էր մի շքեղ հանդես: Ուրիշների հետ հրավիրել էր նաև ինձ: Նշանակված ժամին ներկա եղա:

Հրաչյա Ներսիսյանը, այդ երեկոյի զարդը, Իսահակյանի կենացի ժամանակ մի երկու րոպեով գնաց մյուս սենյակն ու մեկ էլ վերադարձավ գլխին փաթաթած չալմայի դեր կատարող մի սպիտակ սրբիչ և Աբու Լալա Մահարու տեսք ընդունելով, արծվի նման աչքերն անքթիթ, արաբերեն արտասանեց այդ պոեմից մի քանի հատված, մեծ տպավորություն թողնելով ներկաներիս վրա: Վարպետը հիացած էր:

1940 թվականի փետրվարի 20-ին Իսահակյանից մի նամակ ստացա: Այն ժամանակ աշխատում էի «Խորհրդային գրականություն» հանդեսի խմբագրատանը: Վարպետը խոստացել էր մեր հանդեսին ներկայացնել Աբովյանի մասին իր հայտնի ելույթը, որ կարդաց նաև Գրողների տանը մեծ ոգևորությամբ: Ինչպես Աբովյանի նկարագրած Կրասուսի մունջ որդու լեզուն բաց անողը հայրական սերն է եղել, այնպես էլ այդ երեկո Իսահակյանին խանդավառողը Աբովյանն էր: Հակառակ իր սովորության նա ոչ մի անգամ չկակազեց. սկզբից մինչև վերջ մի շնչով կարդաց իր խոսքը Աբովյանի և նրա «Վերք»-ի մասին: Ահա այդ ելույթն էր, որ ուզում էր տպագրել մեր հանդեսում, և այդ մասին էր հաղորդում է ինձ իր նամակում:

«Միրելի Օննիկ, ուղարկում եմ, ուրեմն, «Աբովյան»-ը, «Գրական թերթն» էլ է վերցրել... տեսեք և ներդաշնակեք, միատեսակ լինի: Սրա հետ միասին ուղարկում եմ «Հայրենիքիս» ռոտանավորը, կուզեի, որ տպեիք «Խորհրդային գրականության» մեջ, ընկ. Վահանի հետ խոսել եմ, համաձայն է... Երկու օր առաջ Թբիլիսիի ռադիոն հաղորդել էր այս բանաստեղծությունս:

Այսօր տանից դուրս գալու չեմ, կոկորդս բորբոքված է: Եթե ժամանակ ունես, շատ ուրախ կլինեի երեկոյան 6-7 ժամերից հետո անցնել ինձ մոտ:

Բարևներով՝ Ավետ. Իսահակյան»:

Նույն օրը երեկոյան գնացի Վարպետին տեսնելու և գտա նրան իր գրասեղանի առաջ

նստած, զանազան հին ու նոր նամակներ դասվորելիս: Բարեբախտաբար կոկորդին էլ շատ չէր բորբոքված, և խոսելու հնարավորություն ու ցանկություն էլ ուներ: Չգիտեմ ինչ առիթով Խան Մասեհյանի վաղուց գրած մի նամակն էր հանել գրասեղանի պահարանից. Վարպետը, դիմելով ինձ, ասաց.

-Գիտե՞ս նովհաննես Խան Մասեհյանին:

-Գիտեմ այնքան,- պատասխանեցի ես,- որ Շեքսպիրի լավագույն թարգմանիչն է:

- Իսկ գիտե՞ս, որ իմ առաջարկով էր նա ձեռնարկել Շեքսպիրի ողբերգությունների թարգմանությունը:

Այս ասելուց հետո նա սկսեց կարդալ Խան Մասեհյանի իրեն գրած նամակը, որտեղ նա շոշափում է իր թարգմանությունների հետ կապված մի քանի հարցեր և շնորհակալություն հայտնում Վարպետին նրա արած արժեքավոր դիտողությունների համար:

- Հովհաննես Խանը Պարսկաստանի առևտրական դեսպանն էր, Բեռլինում եղած ժամանակ օգնեց ինձ ձեռք բերել պարսկահայատակի անձնագիր՝ Պայազատցի ազգանվամբ:

Ավարտելով ասելիքը Խան Մասեհյանի մասին, Իսահակյանը սուրճ բերել տվեց: Վարպետի գրասեղանի վրա տեսնելով Լինչի <<Армения>> գիրքը, ասացի.

-Վարպետ, ուզում եմ Շուշիկի նկարը տեսնել, ո՞ր էջում է:

Պոետը ժպտալով գիրքը բաց արեց (էջը անգիր գիտեր՝ 169-170) և դիմելով ինձ, ասաց.

-Ահա տես և կարդա ինչպես է գովում Լինչը Շուշիկի գեղեցկությունը. <<Это была милая, привлекательная девушка с ясными, невинными глазами>>.

Ես բարձրաձայն կարդացի այդ տողերը, որով մեծ հաճույք պատճառեցի Իսահակյանին.

- Իսկ ո՞վ էր Շուշիկը, Վարպետ:

-Իմ հեռավոր ազգականներից էր,- պատասխանեց Իսահակյանը;

- Իսկ Շուշիկի հետ գործը ինչու՞ գլուխ չեկավ:

Վարպետը նորից ժպտաց և շարունակեց իր պատմությունը.

-Զգացմունքներիս ամենաջերմ շրջանում մեր մեջ, մի դատարկ բանի համար, երեք ամիս հարաբերությունների խզում տեղի ունեցավ: Մինչև կվերականգնվեին մեր նախկին հարաբերությունները, հանգամանքներն այնպես դասավորվեցին, որ ես մեկնեցի արտասահման սովորելու (1893 թվականին էր դա): Դեռ նոր էի եկել Վիեննա և ընդունվել տեղի կայսերական մարդաբանական թանգարանը, երբ նամակ ստացա քրոջիցս, որ Շուշիկը ամուսնացել է, և իրենք էլ (այսինքն՝ քույրս և ազգականներս) ներկա են եղել նրա հարսանյաց հանդեսին: Այդ ծանր լուրը խիստ ազդեց վրաս:

Դրա տպավորության տակ նույն օրը գրեցի «Դարդս լացեք» բանաստեղծությունը:

-Իսկ ո՞վ է Ձեզ «հոնգուր-հոնգուր» լացացնող այդ անսիրտ մարդը,- հարցրի ես Վարպետին:

-Հայտնի մանկավարժ Տեր-Միրաքյանը, որն այն ժամանակ նոր էր ավարտել Ենայի համալսարանը և վերադարձել էր Ալեքսանդրապոլ պաշտոնավորելու և ամուսնանալու նպատակով: Շուշիկի ծնողները շլացած այդ երիտասարդի դիրքից ու փայլից՝ առաջարկը չէին մերժել: Իսկ ես այն ժամանակ չուստերով և խունացած վերնաշապիկով ման եկող մի տղա էի. իհարկե նախապատվությունը նրանն էր: - -Պետք է ասած,- ավելացրեց Վարպետը, որ Միրաքյանը բնավորությամբ մեղմ մարդ էր և լավ էր վերաբերվում ինձ, իմանալով հանդերձ իմ սիրավեպը Շուշիկի հետ. երբ ես արտասահմանից հայրենիք վերադարձա՝ չէր արգելում ինձ հանդիպումներ ունենալ Շուշիկի հետ, խանդի տեսարաններ չէր ստեղծում:

Վարպետի հետ ունեցած իմ այդ հանդիպումից բավական անց, ռադիոկոմիտեի նախագահ՝ հանգուցյալ Հովհաննես Պողոսյանի հանձնարարությամբ ես մի գրական մոնտաժ կազմեցի Ավետիք Իսահակյանի բանաստեղծություններից: Թեև մոնտաժի ժանրը ինձ ծանոթ չէր, չուզեցի մերժել բարեկամիս առաջարկը:

Երբ կարդացի Պողոսյանին մոնտաժս, շատ հավանեց և մի քանի օրից ռադիոյով հաղորդել տվեց: Գործս մեծ տպավորություն էր թողել լսողների վրա, շատերը շնորհավորում էին ինձ: Հաղորդումից շատ չանցած Պողոսյանը կանչեց ինձ ու հայտնեց իր գոհունակությունը և ցույց տվեց արտասահմանից ստացված բազմաթիվ նամակներ, որոնց հեղինակները խնդրում էին մի անգամ ևս հաղորդել «բարձր ու ներդաշնակ» գրական այդ հաղորդումը: Այդ օրերին էր, որ Իսահակյանի կինը՝ տիկին Սոֆին հանդիպելով ինձ փողոցում, հայտնեց, որ Վարպետը շատ է հավանել իմ գործը և «Դարդս լացեք», «Միրեցի, յարս տարան» ու «Որսկան ախպեր» երգերի կատարման ազդեցության տակ արտասովել է: Նա հաղորդեց նաև, որ Իսահակյանը կանչում է ինձ իրենց մոտ և շատ ուրախ կլինի, եթե գնամ: Նույն օրը երեկոյան գնացի Վարպետին այցելելու: Ներս մտնելուն պես նա գոհունակությամբ ասաց.

-Ապրես, շատ լավ էիր կազմել, շատ հավանեցի, ազդվեցի և մինչև իսկ, լսելու պահին, արտասովեցի:

Վարպետը խնդրեց, որ Հովհաննես Պողոսյանին էլ շնորհակալություն հայտնեմ իր անունից, նրա այդ լավ նախաձեռնության համար: Այնուհետև անցանք այլ թեմայի:

- Ինչո՞վ ես զբաղված այժմ,- դիմելով ինձ, հարցրեց Վարպետը:

- Ես այժմ գրում եմ Ձեր «Մեր նախահայրերը» պոեմի մասին և կուզեի մի քանի բան հարցնել Ձեզանից:

Վարպետը այսպես պատասխանեց հարցիս.

- Պոեմը գրել եմ 1917 թվականին Ժնևում: Գրության շարժառիթը 1915-16 թվականների գերմանացիների հրահրած և թուրքերի ձեռքով ի կատար ածված հայկական ջարդերն են: Այդ կոտորածների անմիջական տպավորության տակ եմ գրել գործս, որը մի տեսակ հակաթեզ է, հակաթույն սուլթանիզմի այդ հոտենտոտական քաղաքականության դեմ: Ասելիքս այն էր, որ ինչքն էլ սուլթանը մոլեգնի, հայ ժողովուրդը երկրի վրա կա, պիտի լինի ու ապրի այնքան ժամանակ... մնացյալն էլ դու ասա, սիրելի Օննիկ:

- Այո, հայ ժողովուրդն ապրի պիտի այնքան ժամանակ,- ավելացրի ես,

Մինչև արևը հանգչի և ցուրտ աճյունը նրա

Չյունե համայն ազգերի հայրենիքների վրա:

- Ապրես,- ասաց Վարպետը և ավելացրեց,- երևի քեզ այս էլ է հետաքրքրում. «Մեր նախահայրերը» սկզբնապես արձակ գրեցի, ինչպես և «Հավերժական սերը»: հետագայում էր, որ վերածեցի այն չափածոյի և գիտե՞ս՝ մի շնչով գրվեց: Իմ այդ երկու ստեղծագործություններն էլ, հակառակ իմ սովորության, հետագայում ոչ մի փոփոխության, վերամշակման չեն ենթարկվել:

Այդ օրը Վարպետը ինձ պատմեց նաև Գորկու հետ ունեցած իր հանդիպման մասին:

Գրի առածս հուշերի պատառիկներում հետևյալն է արձանագրված Վարպետի խոսքերից.

- 1928 թվականին էր, որ Գորկին ժամանել էր Երևան, ես այն ժամանակ գտնվում էի Լենինականում: Հայաստանի Գրողների միությունից լուր ուղարկեցին, թե Գորկին եկել է և ուզում է Ձեզ տեսնել: Ես էլ իրեն էի ուզում տեսնել: Գորկին իմ սիրած հեղինակներից էր: Նրան տեսնելուս փափագն այնքան մեծ էր, որ նույն օրն ևեթ մեկնեցի Երևան: Մեր հանդիպումը շատ մտերմական էր: Գորկին խնդրեց իմ «Աղա Նազարը», ես սիրով

նվիրեցի նրան մեկ օրինակ: Ալեքսեյ Մաքսիմովիչի գալստյան առթիվ Լուսժողկոմատում Մակինցյանի խնդրանքով Գորկու մասին մի զեկուցում կարդաց Յուլակ Խանզադյանը: Նախագահում էր Ա. Մռավյանը: Յուլակը շատ տաղանդավոր և ազնիվ մարդ էր: Անջնջելի տպավորություն էր թողել վրաս նաև նրա իմ մասին կարդացած մի զեկուցումը: Ի՞նչ մարդիկ կային, սիրելի Օննիկ, և ինչպես շուտ գնացին, ափսոս, հազար ափսոս:

Ժամանակ անց Հայկական մանկավարժական ինստիտուտը, ուր էս այն ժամանակ հայ գրականություն էի դասավանդում, մի գրական երեկո կազմակերպեց՝ նվիրված Իսահակյանին: Ինձ հանձնարարվեց հանդես գալ զեկուցումով: Սիրով համաձայնեցի: Ինստիտուտի դիրեկցիան պրոֆեսոր Շավարշյանի միջոցով հրավիրեց Վարպետին՝ ներկա լինել երեկոյին: Ձեկուցումից հետո ուսանողները խնդրեցին Իսահակյանին արտասանել իր մի քանի բանաստեղծությունները: Վարպետը չմերժեց: Հուզված մոտեցավ ամբիոնին և սկսեց արտասանել իր շատ սիրած «Բինգյոլը», բայց կեսի վրա կանգ առավ, մոռացավ շարունակությունը և մինչ հայացքը ինձ կուղղեր, էս արդեն անցել էի նրա թիկունքը և սկսել էի ցածր ձայնով հուշել «Բինգյոլ»-ի շարունակությունը:

Մուրավել եմ, ճամփաներին ծանոթ չեմ,
Բյուր լճերին, գետ ու քարին ծանոթ չեմ,
Ես պանդուխտ եմ, էս տեղերին ծանոթ չեմ,
Քույրիկ, ասա, ո՞րն է ճամփեն Բինգյոլի:

Երեկոյից հետո Վարպետը թևը տվեց ինձ, և մենք միասին գնացինք: Մինչև տուն հասցնելով բանաստեղծին, հրաժեշտ տվի և ուզում էի հեռանալ:

- Ու՛ր էս գնում, սպասիր, արի տուն՝ թեյ խմենք:
- Շնորհակալ եմ, Վարպետ, ուշ է, մի ուրիշ անգամ կգամ:
- Արի, սիրելի Օննիկ, ուրախ կլինեմ գալուդ:

Բավական ժամանակ էր անցել այդ օրից, երբ մի անգամ երեկոյան գնացի Իսահակյանին այցելելու: Խոսք ու զրույցը սկսվեց դեսից-դենից: Ապա Վարպետն առաջարկեց մեր զրույցին ներկա գրականագետին իր չորս հատորյակի մեջ մտցնել և այն բանաստեղծություններից, որոնք ինչ-ինչ պատճառով ժամանակին հնարավոր չէր համարվել տպագրել: Ի թիվս դուրս մնացած այլ երգերի, խոսք ընկավ նաև «Անի» բանաստեղծության մասին:

- Ձեր այդ բանաստեղծությունը եզակի է մեր հայրենասիրական երգերի մեջ,- ասացի ես:
- Ապա Չարենցի «Ես իմ անուշ»-ը,- զարմացած հարցրեց Իսահակյանը:

- Չէ, Վարպետ, էս այդ մտքով չեմ ասում: Խոսքս ուրիշ բանի մասին է:- Վարպետը աչքերը կկոցելով նայեց ինձ:- Ձեր «Անի»-ն նման չէ «Երգք նահապետի»-ին, որոնց հերոսներն են պատմական անցյալում հանդես եկած քաջ զորավարներ Մուշեղը, Վարդանը, Վահրամ Պահլավունին, ոչ Պեշիկթաշյանի Ձեյթունի դեպքերին նվիրված երգերին, որոնց հերոսներն են պոետին ժամանակակից զեյթունցի քաջորդիները: Ձեր «Անի»-ն նման չէ Նալբանդյանի, Դուրյանի, Պատկանյանի, Հովհաննիսյանի, Թումանյանի, Միամանթոյի հայրենասիրական երգերին ևս, որոնց հերոսներն են անցյալ ու ներկա ժամանակի հայազգի քաջերն ու քաջուհիները: Ձեր «Անի» բանաստեղծության լիրիկական հերոսը Դուք եք: Բանաստեղծ Իսահակյանն է այդտեղ ներկայացված գրչի տեղը զենքն առած, մարտիկ դարձած Իսահակյանը:

Անիի պաշտպանության համար Դուք իբրև բանաստեղծ ուրիշ հերոսների փառաբանելու պաշտոնը չէք ստանձնել, այլ ուղղակի ինքներդ եք հանդես գալիս իբրև կովող զինվոր, Վարուժանի «Կովի երթը» գուցե մասամբ հիշեցնի այդ իմաստով Ձեր «Անի»-ն:

- Դա ինձ համար նորություն էր, բարեկամ,- ասաց Վարպետը և հրճվալից հայացքով

չափեց ինձ ոտքից գլուխ,- կարծես Գորոդեցկին է ասել:

-Այո, Գորոդեցկին է ասել,- վրա բերի ես, հասկանալով, թե ինչ է ուզում ասել Վարպետը,- որ պոետը երկունքի ցավերով բռնված ժամանակ չգիտե ինչ է երկնածը, դայակն է նրան տեղեկացնում` տղա է ծնվել, թե աղջիկ:

Իմ հերթական հանդիպումը Վարպետի հետ տեղի ունեցավ այն օրերին, երբ ոմանք ահագին աղմուկ էին հանել պոետի «Հայրենի հողը» լեգենդի շուրջը, որ իբր Իսահակյանը արքայապաշտության գաղափար է արտահայտել այդտեղ, «Եզր բարձրացրել, տակը հորթ էին փնտրում»:

Իրականում այդ լեգենդի հիմքում ընկած է հայրենի հողի հզորության, նրա ձգողական ուժի գաղափարը: Հին Արևելքի նենգ ու փոքրոգի մի թագավոր, նախանձելով իր ամենանշանավոր զորավարներից մեկի փառքին, նրա սպարապետական սուրը տալիս է մի աննշան, չնչին զորականի: Զայրացած արքայի այդ տմարդի վարմունքից, զորականը իր համհարզներով թողնում և հեռանում է հայրենի հողից: Թշնամին իմանալով այդ, առանց ահի ներխուժում է հարևան երկիրը և ավերում այն: Ահ ու սարսափի մեջ ընկած թագավորը քանիցս պատվիրակներ է առաքում և խնդրում իշխանին` վերադառնալ ու թշնամուց փրկել հայրենի հողը: Արքայի ստոր արարքից վիրավորված զորականը մերժում է պատվիրակների խնդիրքը: Ժողովուրդը սակայն համոզված է, որ զորականը չի լքի հայրենի երկիրը, ուստի նրա մոտ ուղարկում է մի ծեր գուսանի, որի հայրենիք կանչող երգի ձայնը խորապես հուզում է զորականին: Բայց այսչափը միայն: Երգից ավելի հզոր ներգործություն է ունենում հայրենի հողով լի քսակը, որը նրա առաջն է դնում գուսանը: Այդ հողի ձգողական ուժն է, որ մոռացնել է տալիս իշխանին իր քենը, և քաջ զորականը վերստին վերադառնում է հայրենիք ու ազատագրում այն թշնամուց:

Հրայցա Քոչարը իմանալով Վարպետի այս լեգենդի տպագրության դեմ կազմակերպած ոտնձգությունները, «Խորհրդային Հայաստան» թերթում ուզեցել էր տպագրել լեգենդը, բայց չէր կարողացել:

Երբ ես այցելեցի Վարպետին, շատ հուզված վիճակում էր: Նա պատմեց ինձ իր պոեմի շուրջը եղած անախորժ խոսակցությունների մասին և ապա գրասեղանի դարակից հանեց «Հայրենի հողը» լեգենդի մի օրինակը` իր ձեռքով կատարած ուղղումներով և, հանձնելով ինձ, ասաց.

-Թող մնա քեզ մոտ:

Միրով ընդունեցի Իսահակյանի` հայրենի հողի պես թանկ այդ նվերը և մինչև հիմա էլ պահում եմ մոտս որպես մի թանկագին հիշատակ մեծ Վարպետից: Հանգստացնելու համար վրդովված Իսահակյանին ասացի.

-Տաշած քարը գետնին չի մնա, Վարպետ, կտպագրեն:

Առայժմ այդ լեգենդը կարելի է գտնել Իսահակյանի բոլոր ժողովածուների մեջ:

Նույն այդ շրջանում հանիրավի քննադատվեցին Աբեղյանն ու Մանանդյանը ևս, որոնց հետ շատ մոտ էր Վարպետը տակավին Էջմիածնի Գևորգյան ճեմարանում ու Թիֆլիսում, ապա և արտասահմանում եղած տարիներին և որոնց շատ բարձր է գնահատում և մեծարում Իսահակյանը:

«Սկզբունքի մարդ, մեր ապառաժների պես կայուն, մտքի ու կամքի, աշխատանքի ու գործի հսկա, պատկառելի ուսուցիչ, սերունդների անձնվեր դաստիարակիչ: Իր մոռումնենտալ երկերով կառուցեց իր հավերժական արձանը, մեր կուլտուրայի, մեր սրտերի մեջ»,- այսպես է գրել Վարպետը Աբեղյանի մասին, այն Աբեղյանի, որի աշխատությունները քննարկման էր դրվել մի հավաքում, և մի աղքատիմաց պատմաբան իբր քննում ու դատում էր «Հայոց հին գրականության պատմություն» կապիտալ

աշխատությունը: Այդ քննարկմանը ներկա էի և ես՝ նստած էի Վարպետի կողքին: Նա սաստիկ հուզված էր, եղավ մի պահ, երբ Իսահակյանը շուռ եկավ իմ կողմը և ասաց.

-Սրան մի տես, սրա քննադատական խոսքերը Աբեղյանի հասցեին չնչին մի քար է Արարատին նետված, ինչպես կասեր Չարենցը:

Այս ասելուց հետո Վարպետի բարկությունը իջավ, հետո, ինչ-որ բան հիշելով, ժպտաց և դիմելով ինձ՝ ասաց,- իմ մասին շատ բան գիտես, բայց գիտե՞ս և այն, որ Աբեղյանը մորուքս վար առնողն է եղել: Ժողովրդական այս արտահայտության իմաստը ես լրիվ հասկացա:

-Ոչ, այդ իմաստով մի հասկանա ասածս, այլ ուղղակի իմաստով հասկացիր,- և պատմեց, թե ինչպես է, երբ 1893 թվականին նոր էր գնացել Վիեննա, այնտեղ հանդիպել էր Աբեղյանին,- տեղացիները շատ էին ուշադրություն դարձնում բեղ ու մորուքիս համար: Այդ նկատել էր նաև Աբեղյանը:

Մի անգամ նա ինձ առաջարկեց միասին գնալ վարսավիրանոց՝ հարդարելու մազերս: Հազիվ էինք նստել վարսավիրների աթոռներին, երբ Աբեղյանը գերմաներեն երկու բառ ասաց վարսավիրին հազիվ լսելի ձայնով: Ես այն ժամանակ դեռ գերմաներեն չգիտեի և չէի կարող իմանալ «գանց քուրց» բառերի իմաստը: Միայն այն տեսա, որ սափրիչը մի ակնթարթում մորուքիս կեսը վար առավ. ստիպված ողջը մաքրել տվի: Նույն այդ դեպքը պատմել է եղբորս և ինձ նաև Աբեղյանը և իր բամբ ձայնով քահ-քահ ծիծաղել:

1948 թվականի ամառը ես մեկնել էի Կիսլովոդսկ հանգստանալու: Իր ընտանիքով այնտեղ էր գտնվում և Իսահակյանը:

Մենք հաճախ հանդիպում էինք իրար: Կիսլովոդսկից Երևան վերադառնալիս, գնացքում հանդիպեցի Վարպետին, թոռնիկին, տիկին Սոֆիին և նրա քրոջը: Բոլորս էլ շատ ուրախացանք: Այդ երեկոյան խոսելու ժամանակ չեղավ, Վարպետը հոգնած էր և գնացքը շարժվելուն պես պառկեց քնելու:

Առավոտյան Իսահակյանն ուշ արթնացավ: Հազնվեց, լվացվեց, մի երկու անգամ նկատողություն արեց թոռանը՝ Ավիկին, որ տատի և նրա քրոջ Փառիկի հոգու հետ էր խաղում անընդհատ: Այդ օրը Վարպետը պատմեց, թե ինչպես իր մի ընկերոջ հետ ցարական պաշտոնյաների հետապնդումից ազատվելու համար 1910 թվականին անցել էին սահմանն ու փախել: Իմ այն հարցին, թե՝ իրո՞ք վազում էիք սահմանն անցնելիս, Վարպետը ծիծաղեց և ասաց.

- Ես էլ մինչև փախչելս կարծում էի, թե երբ հասնում են սահմանին, վազելով են գնում: Չէ, այդպես չէ: Հատուկ մարդ կար, որ նախօրոք պայմանավորվում էր փախչողների ու սահմանապահների հետ: Ահա մենք էլ գտանք դրանց, պայմանավորվեցինք հետները և երեկոյան դեմ դուրս եկանք սահմանային գյուղից և, հասնելով կոզակների պահակակետին, փող և ծխախոտ տալով անարգել անցանք սահմանը: Այնուհետև նա պատմեց, թե ինչպես Պոլիս հասնելով նյութական ծանր կացության մեջ են ընկել: Պատմությունը դեռ չէր վերջացրել Իսահակյանը, երբ հարևան կուպեից ուղեկիցներ եկան, և Վարպետը փոխեց խոսակցության նյութը:

Երբ Տուապսե հասանք, երևաց Սև ծովը, որ փոքր-ինչ անհանգիստ էր: Նայելով ափին խփվող ալիքներին՝ ես ինքնաբերաբար արտասանեցի Վարպետի «Հոգնած ծովը փրփուր բերնին, ափին ընկած կրհևս» տողերը և ավելացրի.

-Շովի մոտով անցնելիս միշտ հիշում եմ ձեր այդ տողերը, սիրելի Վարպետ:

-Ես էլ ինչքան Լոռվա ձորերով անցնելիս լինեմ, միշտ հիշում եմ Օհաննեսի «Այն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց ժայռերը հսկա նոթերը կիտած» տողերը:

Շովը քանի գնում «պարզ երեսը ավելի էր կնճռոտում»: Երբ հասանք Սոչիի մոտերքը,

ծովն արդեն հուզված էր: Ես, դիմելով Իսահակյանին, հետևյալ հարցումն արի.

-Վարպետ, շատ անգամներ եք ճանապարհորդել ոչ միայն ցամաքով, այլև ծովով. երբևէ փոթորկի հանդիպե՞լ եք:

-Էլ մի ասի. հիմա էլ որ հիշում եմ՝ ոչ միայն տհաճության, այլև վախի զգացում եմ ունենում: Մի անգամ, երբ այս Սև ծովի վրայով նավում էինք դեպի Պոլիս՝ այնպիսի մի փոթորիկ տեսանք, որ դրանից հետո նավ նստելու ախորժակս փակվեց:

Մինչև Թիֆլիս հասնելներս ուղևորները անընդհատ գալիս էին հարևան կուպեններից, հավաքվում Իսահակյանի շուրջը և հնարավորություն չէին տալիս ինձ նրա հետ խոսելու գրական հարցերի մասին: Երբ Թիֆլիս հասանք, Իսահակյանին դիմավորելու եկան նրա ազգականները և տարան տուն, քանի որ գնացքը մոտ տասը ժամ սպասելու էր այդտեղ:

Ես էլ շտապեցի ընկերոջս մոտ: Երեկոյան ընկերոջս ուղեկցությամբ եկա կայարան: Վարպետն արդեն եկել ու տեղավորվել էր վագոնում և պատմում էր իր հարազատների ցույց տված հյուրասիրության և Թիֆլիսից ստացած տպավորությունների մասին: Երբ գնացքը Լենինականից անցավ, Վարպետը մոտեցավ պատուհանին և հայացքը չէր կտրում Արփաչային այն կողմ երևացող Անիին:

-Վարպետ, - դիմեցի ես պոետին, - գիտե՞ք, որ ես էլ եմ եղել Անիում, մի տարեկան հասակումս, ուխտ ենք գնացել:

-Դե պատմիր, ի՞նչ ես տեսել:

-Մեկ էլ որ գնանք, կպատմեմ, - վրա բերի ես:

-Իսկ ե՞րբ ենք գնալու, սիրելի Օննիկ, ե՞րբ:

Այսպես անցանք Անին, անցանք Հոկտեմբերյանը, Էջմիածինը և հասանք Երևան: Հրաժեշտ տալով իրար, շտապեցինք մեր տները:

Իմ հանդիպումները Վարպետի հետ այսքանով, իհարկե, չեն վերջանում: Բայց այժմ շատ բան աղոտել է հիշողությանս մեջ: Ուզում եմ, օրինակ, վերհիշել, թե ի՞նչ առիթով էր եկել Վարպետի մոտ Փափազյանը, որի հետ ծանոթացրեց ինձ Իսահակյանը, ինչի՞ մասին էին այնպես ոգևորված խոսում նրանք, կարծեմ թեման սերն էր: Փափազը պատմում էր, թե ինչպես գրագ էր եկել չգիտեմ ում հետ և ուզած կնոջ վրա հառելով հայացքը, ստիպում էր կանգնել և ծանոթանալ հետը:

-Փափազ, շատ ես չափազանցնում, - ասում էր Իսահակյանը այդ պատմությունները լսելիս:

-Մնացորդը պիտի դուրս գալ:

-Մեկ է, էլի տակը շատ բան կմնա, - ասում էր Իսահակյանը և ժպտում:

Մի երեկո նստած Վարպետի հետ զրուցում էինք, մեկ էլ աչքս ընկավ գրասեղանի մի ծայրին բաց ձևով դրված նրա բանաստեղծությունների ժողովածուի՝ էջի վրա: «Եղբորս որդու՝ Իսահակ Իսահակյանի հիշատակին» բանաստեղծությունն էր.

Հոգուս մեջ դարձար

Դու մի այրող վերք,

Ես քեզ մոռանալ

Չեմ կարող երբեք:

-Վարպետ, - ասի ես, - երևի Իսահակին ամենից շատ եք սիրել ձեր հարազատների մեջ:

Վարպետը կարճ ու խուսափողական մի պատասխան տվեց հարցիս ու լռեց: Ես իսկույն մտաբերեցի «կախվածի տանը պարանի մասին չեն խոսի» առածը և այլևս չշարունակեցի:

Այն ժամանակ ես չգիտեի, որ Իսահակի անդառնալի կորուստը դեռ չէր սպիացել

Վարպետի սրտում: Միայն վերջերս՝ Իսահակյանի եղբոր մյուս որդուց՝ Աբաս

Իսահակյանից իմացա, որ Վարպետը առհասարակ խուսափում էր իր վիշտը նորոգող

այդ նյութի մասին խոսելուց: «Դուն, բարեկամ, Իսահակի մասին խոսք բացելով հորեղբորս ցավոտ տեղին ես կպել: Մյուս անգամ քեզ կծանոթացնեմ ինձ մոտ եղած այն նյութերին, որոնք եղբորս՝ Իսահակին են վերաբերում, և այն ժամանակ կտեսնես, թե ինչու է այդքան մեծ վերք պատճառել Իսահակի մահը հորեղբորս»: Ահա այդ պատասխաններից մի երկուսը,

«Իսահակը ուղղակի վերք դարձավ ինձ համար,- գրում էր Վարպետը:- Չեմ կարող բան գրել նրա մասին, սիրտս չի բռնում: Ժամանակ պիտի անցնի, որ ցավը մեղմանա, և կարողանամ այդ ահավոր վիշտը հանգի ու վանկի, չափի ու ձևի մեջ ամփոփել»:

Իսահակի կորուստը, սկսած Էրզրումի ճակատամարտում նրա զոհվելու օրից (1916 թվականի հունվարի 31-ին) մինչև իր կյանքի վերջը, մտատանջության առարկա մնաց Իսահակյանի համար:

«Շատ հուզված, խռովքի մեջ է հոգիս,-կարդում ենք 1936 թվականի օրագրում,- գլուխս ցավում է, և բոլոր տխուր, դառն ու ցավագին իրողությունները, դեպքերը անցյալ կյանքիս զարթնել են մտքիս մեջ... Իսահակի և մեր ընտանիքի կործանումը և, մանավանդ, Իսահակի հավետ ողբալի, անմոռանալի կորուստը: Մշտապես ներկա է այս վիշտը, որը վշտերիս հիմքն է, ամենամեծ վիշտը, որ ունեցել եմ և ունեմ: Եվ քանի որջ եմ, պիտի տանջվեմ ու անմխիթար մնամ, մինչև զոցեմ աչքերս...

Մեկ ուրիշ տեղ՝

«Չձանձրացա, ահա քսան տարի է, Իսահակի մասին հիշելուց, նրան սգալուց, ասփոսալուց և լաց լինելուց: Նրա սոսկ անունը տալը՝ աչքերս լցվում են արտասուքով, թարմ է վիշտը, բոլորովին թարմ, չեմ հաշտվել, չեմ կարող հաշտվել, ապահովաբար միայն գերեզմանում կմոռանամ նրան, միայն գերեզմանում»:

Այս և նման տողերին ծանոթանալուց հետո միայն զգացի, թե որքան անզգույշ էի գտնվել, երբ հարց էի տվել Վարպետին Իսահակի մասին:

1955 թվականին Սպենդիարյանի անվան Պետական օպերայի դահլիճում տոնվեց Ավետիք Իսահակյանի ծննդյան 80-ամյակը. նույն այդ օրը ցերեկը ինձ հասանելիք հրավիրատոմսը ստանալու համար գնացել էի Գրողների միություն, պարզվեց, որ իմ տոմսը տվել էին ուրիշի: Մտածեցի գնալ առանց տոմսի: Այդպես էլ արի: Օպերայի մուտքի մոտ կանգնած էր կարգադրիչ-կառավարիչը մի քանի գրողների հետ: Դռնապանը տեսնելով, որ ես բարևեցի նրան ու մտա ներս, չհամարձակվեց տոմս հարցնել: Շուտով բեմ եկավ հոբեյարը երկու գրչակից ընկերների ուղեկցությամբ, որոնցից մեկը վրաց գրող Շավա Դադիանին էր, որը Թիֆլիսից հատուկ եկել էր իր սիրած պոետի հոբեյանին ներկա լինելու: Այդ երեկոյին շատ խոսողներ եղան, կարդացվեցին նշանավոր մարդկանց բազմաթիվ ողջույնի հեռագրեր:

Իր պատասխան խոսքի մեջ Իսահակյանը համեստաբար նկատեց, որ խոսողները իրեն դրվատելիս ընկան չափազանցության մեջ:

Վարպետը խոսեց և այն մասին, որ աշխարհ եկող մարդը պետք է միշտ մտածի ոչ թե իր հետ մի բան տանելու, այլ թողնելու մասին:

Չոբեյանի երկրորդ օրը հանդիպեցի Վարպետին: Ի միջի այլոց դժգոհությունս հայտնեցի տոմսեր քաժանելու անկարգ կարգի համար. Վարպետն ասաց.

-Վերջը ներս մտա ր, սիրելի Օննիկ:

-Իհարկե:

-Ինչպե՞ս, առանց տոմսի՞:

-Այո:

- Ինձ հետ էլ նման մի բան պատահեց,- ասաց Վարպետը բազմիմաստ ժպիտը դեմքին:

Այդ միջոցին մարդիկ եկան, և մեր խոսքը փոխվեց այլ ուղղությամբ:

Վերջերս միայն, Վարպետի ծանոթներից մեկը՝ Ն. Ջաղինյանը, որի հետ խոսում էի Իսահակյանի մասին, հետևյալը պատմեց հորեղյանի երեկոյին Վարպետի գլխով անցածի մասին:

-Իսահակյանը տիկին Սոֆիի և Մարտիրոս Մարյանի ուղեկցությամբ ուզեցել էր բեմ տանող դռնից մտնել: Հսկիչներից մեկը մոտեցել էր Վարպետին և ասել.

-Այ ընկեր, հասակով մարդ ես, գնա տուն, քնի, առանց քեզ էլ ինչ լինելու է՝ կլինի:

Հեռվից նկատելով և լսելով Վարպետի և այդ հսկիչի միջև տեղի ունեցած խոսակցությունը, վրա է եկել մի ազդեցիկ մարդ և իմանալով վեճի պատճառը, հասկացրել է այդ աշխատակցին, որ սա նրա կարծած ծերունիներից չէ, այլ ինքը Իսահակյանն է:

Իսահակյանի հետ իմ այս հանդիպումը, որքան հիշում եմ, վերջինը եղավ: «Աշնանային մի օր էլ, երբ փողոցով անցնելիս դիտում էի «ծառերից արցունքի նման դողողալով թափվող տերևները», ականջիս հասավ մեր մեծ բանաստեղծի մահվան բոթը:

... Հիշում եմ և այն թխպոտ օրը, սառն էր արևը, անձրև ու անձրև, երկնքի լացը՝ հուղարկավորների համր լացին ներդաշնակ, հիշում եմ նաև ծովացած ամբոխի հոսանքին չդիմացող պանթեոնի երկաթե դռների ճոնչոցն ու կործանումը: Ի՞նչ ուժ կարող էր դիմանալ վշտահար ժողովրդի հորձանքին, որը եկել էր վերջին հրաժեշտը տալու իր սիրելի Վարպետին:

Մի րեկ ընթերցող, Իսահակյանի կյանքի ավարտով ավարտվում են և իմ հուշերը մեր ժամանակակից, մեզ ծանոթ, մեզ հետ խոսող ու խորհող «մահկանացու Իսահակյանի» մասին: Սակայն Իսահակյանը մահկանացու չէր, որ կար ու հիմա չկա: Նա այն մեծ անմահներից է, որոնց կյանքը կանգ չի առնում այնտեղ, որտեղ վրա է հասնում մահը, այլ շարունակում է ապրել և հետագա սերունդների գիտակցության մեջ: Դեռ ինչքան սիրահարներ նրա երգերով իրենց «դարդը պիտի լան». դեռ ինչքան հայ պանդուխտներ գաղթաշխարհում ապրող կամ «օտար ամայի ճամփեքի վրա» դեզերող իրենց կարոտը մայր հայրենիքի հանդեպ պիտի արտահայտեն «Հայրենիքես հեռացել եմ», «Մնացի կարոտ իմ հայրենիքին» և նման ուրշ երգերի միջոցով: Դեռ ինչքան բանաստեղծներ պիտի գան ու Չարենցի պես աչքերը հառեն հայ երգի այդ բարձրագույն կատարին, ասելով.

... Ախ, կուզեի ես ունենալ
Գոնե մի երգ այդքան ջերմին,
Որ գրեի խուղիս որմին-
Եվ նա հավետ այնտեղ մնար:
Եվ սերունդներ այսպես գային
Եվ կարդային խուղիս որմին
Սրտիս միակ երգը ջերմին,-
Եվ երգը այդ ես քեզ տայի: